ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻՒ Գ. ՏԱՐԻ ԺԷ. ՄԱՐՏ 31

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ. Բարոյական խրատք. Թարգ. Գ. Ե. Ա. . . . 97
Ս. Լուսաւորչի վիրապ մտնելու տօնը. Յ. Վ. Մ. . . . 106
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բաֆայէլ Սոնցիօ. Թարգ. ՌԷՔԷ . . . 111
Հայոց հեթանոսութեան պաշտամունքը. Յ. Վ. Մ. . . . 119
Աստուած խեղճերին անխնամ չի ձգնում. Մ. կեանչեցեանց . 124
ՋԿՆՈՐԱ. Յ. ՅովհաննիսեանՀ 135
ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կաթուղիկոսի ընտրութեան հիմնական կանոն. — Հաշիւ Բռնակոծ վիւղի դպրոցի 129
Մահացուցակք Եղիազար Ա.րքեպիսկոպոսի եւ Սուքիաս Թաղիաեանի. 124

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՃԼԴ—1884

“ԱՐԱՐԱՏ„

ԱՄՍԱԳԻՐ

Կը հրատարակուի ամիսը մի անգամ; բաժանորդագրութիւնը տարեկան է եւ սկսւում է Յունվար ամսից. բաժանորդագրւին է

Ռուսաստանում՝ 4 րուբլի. Տաճկաստանում, Պարսկաստանում եւ Եւրոպայում 5 ր. Հնդկաստանում 6. ր.

Մրագիրն է.

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Արարատում՝ կը հրատարակուեն նաեւ Վեհափառ Կաթուղիկոսի եւ Սինոդի կողմից՝ եղած վարչական այլ եւ այլ հրահանգութիւնները եւ Սինոդի օրագրութիւններից քաղուածներ:

Արարատում՝ կը հրատարակուեն յիշատակարաններ՝ իբրեւ պատմական աղբիւր. կարատատպուեն լրագրներից իւր ուղղութեանը յարմար յօդուածները դետեղելով ըստ բովանդակութեան:

Կը հրատարակուեն նաեւ լուրեր «Այլ եւ այլք» վերնագրով:

Հայաբնակ քաղաքներում եւ գաւառներում մտորագրուել ցանկացողները թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին՝ Հասցէն Эчміадзинъ. Типогр. Комитетъ Տպարանական ժողովին:

Մամուլի տակ են ԱՒԵՏԱՐԱՆ համաբարբառ վկայութեամբ հին և նոր Կտակարանաց, և ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՒԱԳԻՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԴԱՎՐԻԹԻՑԻՈՅ համեմատական ծանօթութեամբք:



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Գ. — ՇՐՋԱՆ ԺԷ. 1884 ՏԱՐԻ ԺԷ. ՄԱՐՏ 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

Ա յն ժամանակ կայրն ոմանք, որոնք պատմեցին Յիսուսին այն Գալիլիացիների մասին, որոնց արիւնը Պիղատոս խրանց զոհերի հետ խառնեց: Յիսուս պատասխան տուեց ու ասաց նոցա. կարծեմէք, որ այն Գալիլիացիները բոլոր Գալիլիացիներից աւելի մեղաւոր էին, որ այսպիսի բաներ քաշեցին: Ասում եմ ձեզ՝ չէ. այլ, եթէ որ չապաշխարէք, ամենքդ էլ նոյնպէս կը կորչէք:— Կամ կարծեմէք դուք, որ այն տասնուերկու հոգին՝ որոնց վերայ Սելովամի միջի աշտարակն ընկաւ ու սպանեց, Երուսաղէմում բոլոր հրէաներից աւելի պարտաւոր էին: Չէ, ասում եմ ձեզ. այլ, թէ որ չը լաւանաք (ուղիղ ճանապարհը չը գաք), ամենքդ էլ նոյնպէս կը կորչէք:

Սուրբ Աւետարանի այս կտորի մէջ պատմվում են անբախտութեան երկու յայտնի դիպուածներ, որով շատ մարդիկ յանկարծ կեանքից զրկուեցին: Այդ դժբախտութիւնը ժամանակի ճնոտիապաշտ մարդին Աստուծոյ պատիժ էին համարում որ նոցա վերայ եկաւ ի-

բանց մեծ մեղքերի համար. բայց Քրիստոս ուղղումէ նոցա այդ սխալ միտքը շատ վսեմ կերպով: Նա ցոյց է տալի, որ մահն ամենայն մահկանացու մարդոց վիճակուած բաժինն է, և այդ մանուր դիպուածի մէջ ամենևին մասնաւոր պատիժ չէ կարող լինել, և հասկացնումէ, որ այդպիսի զարհուրելի պատահմունքը աւելի յորդոր և խրատ է կենդանի մնացողների համար, որ արթուն մնան և ապաշխարեն: Եթէ որ դուք էլ չուղղուէք, ամենքդ էլ նոյնպէս կկորչէք: Կամենումէ ասել թէ՝ ով որ Աստուծոյ և առաքինութեան համար չէ ապրում, նա մահից պէտք սարսափի, ինչ կերպով էլ որ գալու լինի վերան. բայց ով որ ամեն ժամանակ իրան արթուն և պատրաստ է պահում Աստուծոյ առաջը պատասխան տալու, նորա համար մահն անգամ՝ սիրտը վախ քցող մի բան չէ: Այս յորդորը արթուն մնալու՝ մեզ համար միշտ պէտք է. մենք մեր կեանքի ամեն մի օրը պէտք է մտքներիցս անցկացնենք, որ միշտ այս աշխարհիս վերայ մնալու չենք, որ այսօր՝ կամ վաղը պիտի լսենք այն ձայնը թէ՝ «Տո՛ւր քո տնտեսութեան հաշիւը»: Սորա համար լաւ է մահուան և յաւիտենական կեանքի վերայ շատ անգամ մտածել և երկուսն էլ աչքի առաջ ունենալ. այնպէս ընտելանալ թէ՛ մահուան և թէ՛ յաւիտենական կեանքի հետ և ընտանի դառնալ, որ մեզ միխիթարող բարեկամներ լինին երկուսն էլ մեր բոլոր կեանքի մէջ:

Տարակոյս չըկայ, որ ամենից քաղցր մահն այն է, որ մարդս երկար, բարեպաշտ ու պատուաւոր կեանք անցկացնելուց յետոյ՝ մեռնումէ, երբ որ կամաց կամաց ուժից ընկնումէ և կեանքի վերայ մի առանձին սէր չէ մնում, միայն հոգին սաստիկ ցանկանումէ լաւագոյն կեանքին: Այսպիսի կեանքը բոլորովին նման է կամաց կամաց հանգչելու մծտեղող ճրագին, որ այնքան երկար վառվռումէ, մինչև որ տակը ամենևին բան չէ մնում:

Երկար ապրելուց յետոյ՝ մի քաղցր քուն մտնելու նման՝ հարգիստ մեռնելը, աչքը վակելով աշխարհին՝ զաւակների և թոռների մէջը, ամեն մի մարդու սրտի յայտնի կամ ծածուկ բաղձանքն է: Բայց քիչ է պատահում, որ մեր այդպիսի ցանկութիւնը կատարուի. քիչ է պատահում, ասումեմ, նորա համար, որ քիչ մարդ կայ, որ իւր տղայութեան օրերիցը իւր համար այնպիսի մի կեանք պատրաստի, որ թէ՛ առողջ և թէ՛ երկար ապրի: Եւտ ու շատ մարդիկ՝ իրանց մատաղ հասակումը՝ Աստուծոյ սարգելած կեն-

սական ուժի կողմանէ վատ տնտեսութիւն են անում։ Անխնայ գործ ածելով իրանց ուժը՝ վչացնում են կամ չափից դուրս աշխատութիւնով կամ անառակ կեանք վարելով, անզգուշութիւն անելով իրանց առողջութիւնը պահպանելու կողմանէ, կամ իրանց կրքերին ծառայ դառնալով, որոնց անձնատուր են լինում բոլորովին։ Ոչ մի բան այնպէս շուտով չէ մաշում մարդուս կեանքը և այնպէս սաստիկ չէ պակասեցնում կենդանական կրքերը, որպէս և զայրացկոտութիւնը, ատելութիւնը, նախանձը, կենդանական ցանկութիւնը։ Սորա հակառակը պէտք է ասենք, որ ոչ մի բան այնպէս չէ օգնում և չէ յաջողեցնում ապահով կերպով իրին ծերութեան հասնելու, կնչպէս չափաւորութիւնն ամէն բանի մէջ, ու միանգամայն մարդուս ուրախ և անվրդով բնութիւնը բախտաւորութեան և անբախտութեան մէջ որպէս և անդրդուելի հաւատը Աստուծոյ վերայ։

Խելքից դուրս բան է ու բոլորովին սխալ միտք, երբ որ մի մարդ՝ մի հիւանդութիւն ունեցած ժամանակը վախենում է ու կարծում, որ ահա մահն եկել է, էլ չի ապրիլ։ Թէև ամեն մի հիւանդութիւն ունի երբեմն իւր շատ ծանր օրերը, բայց մենք էլի գիտենք, որ մարմնաւոր ցաւերը, որ տեսակն էլ լինին, իրանց մի սահմանն ունին, որ այն կողմը չեն անցնիլ։ Երբ որ իրանց ամենաբարձր աստիճանին են հասնում, մարդուս այնպէս են անում, որ էլ բան չի զգում և իրանց ոյժն էլ այդ միջոցին կորցրում է։ Այն հիւանդութիւնը, որ մարդուս պէտք է մեռցնի, չէ կարելի առել, որ ամենամեծ ցաւեր է պատճառում։ Ինչքան մարդիկ կան, որ շատ աւելի մեծ ցաւեր են քաշում, ձեռք կամ ոտք վիշրելով, կամ ծանր վէրքեր ստանալով և այս կամ այն անգամիցը ղրկվում են, բայց ուրիշ ամեն կողմանէ բոլորովին առողջ են։ Ի՞նչքան էլ սաստիկ ցաւեր են քաշում այդպիսի մարդիկն, այդ տեսակ անբախտութիւնների իրանց պատահած միջոցին, սակայն շատ անգամ հերոսի նման քաջասրտութեամբ տանում են, դիմանում, և ողբրդ, զարմացնում են ուրիշներին։ Քանի որ այս կեանքիս մէջն ենք, միշտ մեր աչքի առաջ ունենանք թէ՝ երբ որ Աստուծոյ կամքն է, մարմնաւոր ցաւեր կը քաշենք, ազատ չենք մնալ նոցանից։ Մարդս այնպէս է ստեղծուած միանգամ, որ ոչ միայն ախորժ զգայմունքներ, այլ և ցաւեր պիտի ունենայ, և մեր այդ երկու տեսակ զգայմանց մէջը միշտ տեսնում ենք այն տնօրէնութիւնների մէկը, որոնց մասին պէտք է

առենք՝ անհասկանալի են մեզ համար և անքննելի, բայց որովհետև Աստուածանվեց են գալիս, միշտ բարի են: Մեր խելքը չէ հասնում ինչի շատ անգամ կրակի նման այրող չարչարանքներ ենք քաշում թէ մեր մարմնի և թէ արիւնի սաստիկ տաքութիւն պատահելուց, բայց անտրտունջ պէտք է քաշենք, տանենք, ինչպէս Քրիստոս մեր Փրկիչն խաչի սարսափելի չարչարանքն Աստուծոյ հերոսի նման քաշեց, տարաւ: Միայն թուլամորթ աշխարհի մարդը, միայն Աստուած արհամարհողը վրդովում է և ընդխմանում՝ փորձանքներ գլխին եկած ժամանակը: Քրիստոնեան ընդունում է խոնարհութեամբ իբրև ի վերուստէն եկած մի պատգամաւորութիւն իր բարւոյն ու փրկութեանը համար: Աստուած մեր ուժից աւելի ցաւ ոչ մէկին չէ տալիս, բայց մարդս իր ցաւն ու նեղութիւնը շատ անգամ ինքն է շատ աւելացնում իր անհամբերութեամբը նեղանալովը, տխրելովը, վախկոտութեամբ ու թուլասրտութեամբ: Ամենագժուար և անտանելի ցաւը ոչ թէ մարմնոյ ցաւն է, այլ հոգունը:

Այն մահը, որ մարդս իր հիւանդութեան անկողնում հասկանում է որ իրան պիտի պատահի անպատճառ, յանկարծ մեռնելու հետ համեմատելով, իւր շատ լաւ կողմերն ունի: Մահն, որ միշտ մի բարերարութիւն է մեր ստեղծողի կողմից— և մեր երկնաւոր Հայրը միայն գիտէ թէ՝ ո՛ր մահուամբ մեռնելը աւելի լաւ է այս՝ կամ այն մարդու համար— ուրեմն պէտք է ասենք, որ կամայ կամայ մահուան մօտենալը պակաս ողորմութիւն չէ մեզ համար:

Որչափ և ես հոգայող ու կարգասէր լինի մի քրիստոնեայ իւր գործերի մէջ, բայց և այնպէս իւր ընտանիքից բոլորովին բաժանուելուցը առաջ դեռ շատ բան կունենան կարգի դնելու, որ իրանից յետոյ մնաի և իսառը գործեր չըթողնի գժգոհութիւններ ու անհամութիւններ չըպատահին, որով վնասուել կարող է մասամբ իւր սեպհականութիւնը և մասամբ իւր բարի անունը: Ո՞վ կարող է ասել, որ ինքն իւր տան գործերը ամէն օր այնպիսի կարգի մէջ է պահում, որ առանց մի վնաս պատճառելու իւրայնոյ, Աստուծոյ այս աշխարհիցս իրան կանչելը, որ ժամին էլ որ լինի, կորոշ է հանգիստ սրտով սկսել այն երկար ճանապարհորդութիւնը դէպի յաւիտենական կեանքը: Բայց ոչ ոք հանգիստ սրտով իւր աչքը չի փակիլ աշխարհիս, եթէ որ առաջուանից հոգս քաշած չըլինի իւր ընտանեաց համար. եթէ որ ամէն մէկին լողմնոանքով տուած չը

լինի, ինչ որ կըհասնի, ու եթէ բանն այնպէս խելքով բռնած չը լինի, որ իւր մահից յետոյ զժուարութիւն, շփոթութիւն, վէճ առաջ չը գայ: Բանը նորա վերայ չէ, որ մենք մերայնոց մեծ կարողութիւն ենք թողնում մեզանից յետոյ — որովհետև ամեն մի մարդ դիպուած ունեցած չի լինիլ կարողութեան տէր դառնալու, — բանն այն է, որ մեռնողի անունը զարդարանք լինի՝ իրանից յետոյ էլ իւր անխարդախութիւնն — և այդ՝ ուղիղ ճանապարհով ձեռք բերած: Ինչքան որ կարող ենք, անխարդախ կերպով պիտի կատարենք մեր գործերը. մեր մահից յետոյ Աստուած ինքը կը հոգայ մնացածի մասին, ինչ որ մենք չենք կարողացել անել: Նա է մեր ընտանիքի Հայրն. նորա մեր ընտանեաց հայրը լինելուն ապացոյցն այն է արդէն, որ նա մինչև մեր մեռնելը մեզ ժամանակ է տալիս ինչ որ օտարլինն է՝ յետ դարձնելու, կամ ինչ որ մերն է՝ այդ մեր ունեցածի մասին կտակ անելու, որոյ մէջը մենք, եթէ ձեռքներից գայ, ոչ միայն մեր մերձաւոր ազգականներին, այլ և մեր տան հաւատարիմ սպասաւորներին էլ չը պիտի մոռանանք. ոչ միայն մեր տան սպասաւորներն այլ և հասարակաց հաստատութիւնները, որ մարդոց բազմութեանը օգուտ են բերում, պէտք է մեր մտքիցը չընկնեն: Մեր մահուան անկողնի մէջ եղած ժամանակն էլ մեր գործովը պիտի ցոյց տանք մեր մարդասէր ու հայրենասէր լինելը:

Կամաց կամաց մահուան մօտենալը կամ յանկարծ չը մեռնելը՝ Աստուծոյ գեղեցիկ բարերարութեան մէկն է, որ մենք ժամանակ ենք ունենում մեր բարեկամներին մեր մահուան համար պատրաստելու: Նոքա այնպէս չեն սարսափիլ ու չեն կորցնիլ իրանց, ինչպէս որ կըլինէին, երբ որ մենք յանկարծ խլում ենք նոցանից: Թէև նորա ցաւը զարձեալ մեծ կըլինի, բայց մարդս աւելի քաջութեամբ է տանում այն, ինչ որ առաջուանից տեսնում էր, որ պէտք է լինի, և այդ ժամանակ միխիթարութեան խօսքերը աւելի շուտով ու հեշտութեամբ են մտնում մեր ականջը և ներգործում մեր սրտի վերայ: — Ի՛նչպէս գեղեցիկ կերպով պատրաստեց Յիսուս իւր սիրելիներին, երբ որ անխուսափելի մահուան առաջն էր գըլնում: Ի՛նչպէս մարդու սիրտը վսեմ զգայմունքով բարձրացնող օրինակ է, որ նա իրանից յետոյ մեզ համար թողեց:

Պէտք է նոյնպէս ասենք, որ մարդս այլ եւ այլ բաներ ունի իւր մտքումը, որ կըցանկանար անել: Աստուած չէ թողնում, որ յան-

կարճ մահը նորան տանի ու իւր օրտի բարի խորհուրդները անկատար մնան: Մարդս ժամանակ է ուռանում բաւական բարի գործեր կատարելու, եւ իւր երկրաւոր կեանքը վերջացնելու այնպիսի մի գեղեցիկ գործով, որ իւր կեանքի թագն ու պսակը լինի: Մարդս իւր հոգին ուրախութեամբ կաւանդի, երբ որ մտածում է, որ իւր կեանքի վերջին րոպէներումն էլ՝ իբրեւ քրիստոնեայ՝ քրիստոնէական գործ կատարեց:

Եթէ որ այնչափ հարուստ էլ չըլինինք, որ մեր հիւանդութեան անկողնումը ողորմութիւններ տանք մեր մեռնող ձեռքովը — անպատճառ պէտք է հարուստ լինինք մի բարի բան անելու կոչմանէ: Մի թէ միայն մի խելք խօսքը շատ անգամ աւելի մխիթարական, աւելի օգտակար, աւելի միտք բացանող եւ շատ բանի մէջ օգնող չէ՞ քան թէ մի մեծ ժառանգութիւն, որ մարդիկը թողնում են երանգից յետոյ, այն էլ այն խօսքն, որ դուրս է գալիս մի մեռնողի բերանից իւր մահուան անկողնումը, երբ որ շրթունքները արդէն գունատուել են, դողդողումեն ու սառչելու վերայ են: Այո, մահուան անկողինը աստենարանութեան մի ամբիոն է, որից ոչ մի հաւաչանք, ոչ մի նայուածք ու շարժուածք զուր տեղը չեն լինում: Հոգեվարք հայրը, որ իւր զաւակներին վերջին օրհնութիւնն է տալիս, պատկառանքով, հաւատով ու սիրով է ունկնդրութիւն գտնում: Նա կեանքի շէմքումը, յաւիտենականութեան բոց դռների առաջ մի ուրիշ մարդ դարձած է երեւում: Հոգին աւանդողի բերանումը միայն ճշմարտութիւն է: — Այսպէս մայր մտնող արեգակը մեր աչքից ծածկուելուց առաջ, մէկ էլ իւր գեղեցիկ ճառագայթները վառառուր կերպով ձգումէ ամենայն կանաչ դաշտերի վերայ, որ օրուան իւր ընթացքումը լուսաւորել էր ու տաքցրել: Այն ժամանակ կարող ենք մենք հանգիստ եւ ուրախ սրտով հեռանալ աշխարհիցս ու դիմել դէպի միւս կեանքը, այն ժամանակ կարող ենք մենք՝ մեր օրուան գործը կատարելուց յետոյ սպասել Քրիստի աւետեաց խօսքին թէ ես կըհանգուցանեմ ձեզ:

Աստուծոյ հնազանդ մարդու համար, ճշմարիտ քրիստոնէի համար՝ մահը ամենեւին վախենալու մի բան չունի. բայց առաւել եւս այն լոյսը, երբ որ հոգին իւր մարմնաւոր պատեանից բաժանվում է: Շատ մեռնողների համար մի ճշմարիտ քաղցր բան է եղել խաղաղ կերպով նկատել հոգւոյ բաժանուելը իւր հողեղէն մար-

մընից: Այս բանը յայտնի են արել մանաւանդ այն տեսակ հիւանդները, որոնց հիւանդութիւնը արդելք չէ եղել իրանց համար դիտելու իրանց անձի դրութիւնը: Այդ դրութիւնը ոչ միայն երկիւղ չէր բերել նոցա վերայ, ինչպէս որ կարող էին կարծել և շատ էլ հոգս անել իրանց առողջ օրերումը, այլ ընդ հակառակը նորա աւելի ուրախ եւ աւելի վսեմ դրութեան մէջ են իրանց տեսել. այսուհետև աշխարհն ու կեանքն էլ աւելի՛ն այն գինը ունենալ չեն երևացել նոցա աչքումը այն բարձր վիճակի հետը համեմատելով, ինչի մէջը որ իրանց մի զարմանալի կերպով փոխադրուելը զգացել են:

Մարդս՝ մեռնելու մէջոցին՝ զգում է, որ իւր մէջը սկսվում է հոգւոյ բարձր վիճակը. այդ րոպէներումն մարդուս հոգին նորա համար աւելի հաստնացած վիճակի մէջ է գանվում, որ նորա հողեղէն մարմնոյ՝ իրան ճնշողը ծանրութիւնը կամաց կամաց հեռանում է իրանից: Նա մի ազատ դրութեան մէջ է ընկնում. նա ինքը իւր աչքին երևում է որ էլ առաջուայ մարդը չէ, որ մի զօրութիւն ու մեծութիւն կայ իւր մէջ, այնպիսի մի զօրութիւն ու մեծութիւն, որ առաջ երբէք իրան յայտնի եղած չէր: Այս բանը նկատուած է շատ մեռնողների վերայ: Երբեմն նոքա՝ իրանց մեռնելուց առաջ՝ ունեն մի քանի պայծառ րոպէներ, երբ կարող են աւելի ղուարթ կերպով խօսել իրանց չորս կողմը գտնուած մարդոց հետ: Սովորաբար նոքա այն ժամանակ ոչ միայն իրանց մահուան ժամը, այլ գրեթէ րոպէն անգամ որոշ կերպով չգիտեն թէ երբ կըպատահի: Նոքա անում են իրանց վերջին կարգադրութիւնները՝ առանց գիտենալու առաջուանից թէ մահ երբ կըպատահի իրանց: Նոցա ուժերն սկսում են զարմանալի կերպով աղնուանալ. վաղուց անշկացած բանը իրանց աչքի առաջն է գալիս պարզ ու պայծառ կերպով. այն բանն, որ իրանց առողջ օրերումը, կարծես մոքներիցն ընկել էր, կամ հազիւ էլեն միտքները բերում մի մոխի կերպով: Ուրիշներն ապագայ բաներին վերայ են խօսում: Սորա համար մարդկի մեռնողների դրութիւնը շատ անգամ հիացման կամ յափշտակութեան վիճակի հետ են համեմատել, կամ հոգւոյ լոյսը նմանեցրել են այն լուսին, որ՝ իւր հոնդչելուց առաջ՝ գարձեալ մի անգամ և աւելի պայծառ կերպով լոյս է տալիս քան թէ երբ և իցէ պատահել էր այդպէս լոյս տալ: Սորանից հասկանում ենք որ հենց մեռնելու մէջոցին սրդէն

սկսում է մարդուս հոգւոյ վիճակի բարձրանալը: Թէև նա մնար-մնաւոր կեանքի կողմանէ գիտակցութիւնը կորցնում է, բայց և մի և նոյն ժամանակ անուրանալի կերպով ամենապայծառ ու մեզ բոլորովին անհասկանալի մի ինքնագիտակցութեան վիճակի մէջ է մնում, կամ վոխագրվում:

Մարդիկ շատ անգամ քունը մահուան եղբայր են ասել. բայց դորանով մի բոլորովին սխալ գաղափար են մտցրել կեանքի մէջ: Քունը համարում են մի անդգայ դրութիւն. ինչու որ, մարդս զարթնած ժամանակը չէ կարող միտքը բերել այն, ինչ որ իւր հոգին մտածում էր՝ մարմինը քնած ժամանակը: — Բայց հոգին ունի միշտ իւր գիտակցութիւնը. նա երկու տեսակ կեանքով է ապրում. մէկը՝ մարմնոյ հետ, միւսը՝ մարմնից առանձին: Ինչ որ նա քաղ պէտք-մտածելով, կամ արթուն ժամանակը իւր կեանքումը տեսնում է, լսում, անում կամ լինում, այն նորա մտքին է ամեն ժամանակ և յիշել կարող է պրոմտին ջլջոյին: Սորա հակառակին, ինչ որ նա տեսնում է, լսում, անում լինում միակ զգացմունքներով կամ քնած ջլջոյին մարմնոյը անկախ, այդ նա իւր արթուն ժամանակը չէ յիշում, կամ միայն մուխ կերպով այն երազներիցը, որ նա աշխատում է միտքը բերել, երբ հոգին զարձեալ սկսում է կապակցութեան մէջ լինել մարմնոյ գործարանների հետ: Բայց մահը բոլորովին դէն է գցում իրանից այն բոլոր կապերը, որով պատել էր իրան երկրաւոր մարմինը: Հոգին այնուհետև էլ չէ հպատակում երկրաւոր մարմնոյ օրէնքներին, այլ մի անհամեմատ բարձր կեանքի ու գոյութեան շէմքումն է կանգնած արդէն: Երբ որ մարդուս մարմինը բոլորովին մեռնում է, այն ժամանակ սկսվում է՝ մեզ վերայ ծանրացող զգայական կեանքի ամենայն կապերից արձակուած ու ազատ՝ մեր անմահ գոյութիւնը կամ կեանքը: Սորա համար մահը մեր վիճակի բարձրանալն է, մի փառաւոր ազատ դրութեան հասնելն է: Սորա համար է և հանգստութիւնը մեռնողների, երբ որ վերջապէս աքանչելի կերպով գեղեցիկ րոպէն գալիս հասնում է: Անհասելի մի քաղցր րոպէ պէտք է լինի այդ րոպէն: Մարդս՝ շատ անգամ մեռնողների կերպարանքի գծագրութեան մէջ՝ իրանց մեռնելուց մի քանի ժամ յետոյ և՝ կարծես տեսնում է մի գոհ և անպատմելի ուրախ ժպիտ, որ նոցա լաւ դրութեան մէջ գտնուելու մի թոյլ ու վերջին արտայայտութիւնն է: Մարդս, կարծես, նոցա երեսի վերայ կարդում է նորանց վե-

բայ կատարած Քրիստոսի մեր Տիրոջ խօսքը թէ՝ «Ես կը հանգչեցնեմ քեզ»:

Ա. յսպէս կեանքից բաժանուիլը՝ մանաւանդ արդարի համար մի-այն պողաքեր է: Երկնային ուրախութիւններով լի մի րոպէ է, հոգին էլի վերագառնում է նրան յաւուկ արժանաւորութեանը: Եթէ նա առաջ ապրել էր աշխարհիս վերայ, բայց այժմ միայն կարող է կրկին միաք բերել իւր կեանքը, մինչդեռ այդ բանն անկարելի էր նորա համար, քանի որ երկրաւորի մութ կապը պատած էր նորան և նա սկսոք էր այդ կապը տանէր, որովհետև մարդ էր և իբրև մարդ պիտի ապրէր:

Ո՛վ Աստուած, ահ իմ երկնաւոր Հայր, ես պողպատ հոգիս էլ Դա-նիէլհանգուցանէս: Չէ, մահուան րոպէին իմ անձս էլ դող չի բռնիլ: Ես այն րոպէին, այն երջանկացնող հաւատովն ու յուսով կրսպասեմ, որ մահին յաղթող իմ Փրկիչս ինձ տուել է. այն րոպէին աստուեմ, կրսպասեմ ես այն ուրախութեան, որ իրաւունք է տուել ինձ ունենալու քո անչափ սէրդ: — Այն ի՜նչ հրճուանք կրլինի, երբ որ իմ բոլոր կորոյրածս այժմ ինձ յետ կրտրուի տուրը և փառաւոր կեանքումը: Այն ի՜նչ մեծ ուրախութիւն կրլինի, երբ որ ես, ժամանակաւոր կեանքի նեղ սահմաններիցը էլ չընեղուելով կատարելութեան նպատակիս կրհասնեմ:

Պարգևիր ինձ միայն զօրութիւն և կարողութիւն, ահ իմ երկնաւոր Հայր, որ ես արթուն մնամ և աղօթք անեմ, որ այս տեղ հաւատի բարուք պատերազմը պատերազմեմ և այն տեղ մի օր քո ձեռքիցը ստանամ յաղթութեան պսակը:

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԻՐԱՊ ՄՏՆԵԼՈՒ ՏՕՆԸ.

(Մովսէս Խորենացի, գիրք Բ. գլ. ՀԲ. — ՁԲ. և Հ. Ձամ. հատ. Ա. Գիրք Բ. գլ. ԼԳ.):

—

Քրիստոսի 225 թուին Պարսկաստանում թագաւորում էր Արտաւան, իսկ Հայաստանում՝ Խոսրով Ա. մեծն: Դոքա երկուքն էլ Արշակունի էին և միմեանց օգնում էին միշտ՝ որ երանց ցեղը երկու ազգի վերայ էլ երկար թագաւորէ:

Սասանեան ցեղից Արտաշիր անունով մի Պարսիկ նախարար ուրիշ նախարարների հաճութեամբ ու կամքով սպանեց Արտաւանին և տեղը թագաւորեց: Հայոց Խոսրով թագաւորը իմանալով այս բանը, սկսեց թշնամանալ Արտաշրի հետ, և մի քանի պատերազմներում յաղթելով նորան, հալածեց մինչև Հնդկաստան, և իւր յաղթութեան ու Արտաւանի մահուան վրէժն առնելուն ի յիշատակ՝ Պարսկաստանի Ասորպատական աշխարհում շինեց Վաղարչաժ քաղաքը. որ կընշանակէ վրէժ առնելու համար:

Արտաշիրը տեսնելով որ հանդիստ գտնելու չէ Խոսրովի ձեռքից՝ Արշակունի պարթեւ նախարարներից նորան, ով որ կրկարողանայ Խոսրովին թունաւորելով կամ սրախողխող անելով սպանել՝ խոստացաւ Արշակունի պարթեւների հայրենական Բահլ մայրաքաղաքը և Խուշանաց աշխարհը տալ, իւր երկրորդը անուանելով՝ թագաւորական ծիրանի և թագ շնորհել:

Այս խոստումից հրապուրուելով՝ արշակունի Անակ նախարարը իւր եղբօր հետ, որպէս թէ Արտաշրից փախստական և հալածուած՝ Ասորեստանի վերայով եկաւ Հայաստան՝ ապաւինելով Խոսրովին որպէս իւր ազգական Արշակունու: Խոսրով, որ Ուտէացւոց Խաղխաղ քաղաքումն էր, իմանալով Անակի եկաւորութիւնը, բայց չիմանալով նորա նպատակն ու կեղծ վախստասը Արտաշրից, օգնութեան համար զօրքեր ուղարկեց և հրաւիրեց իւր մօտ. զօրքերը Արտաղ գաւառում հանդիպեցին Անակին, և թագաւորի հրամանով տարան Խաղխաղ քաղաքը:

Խոսրով թագաւորը սիրով ընդունեց Անակին և իւր հետ առնելով եկաւ իւր Վաղարշապատ մայրաքաղաքը, ուր ծնուեց Անակի այն արու զաւակը, որ յետոյ կոչուեց Գրիգոր և Հայերիս լուսաւորիչը գրէաւ: Պատմուածն որ Անակի կինը Արտազ գաւառումն, Ս. Թագէոս առաքեալի գերեզմանի մօտ յղացաւ Գրիգոր մանուկին:

Խոսրովին ապաւինելու երրորդ տարին՝ Անակը և իւր եղբայրը միանգամ՝ Խոսրովի հետ որսի գնացած լինելով, անակնկալ կերպով սրով մահամերձ վիրաւորեցին նորան, և երբ կամենում էին փախչիլ, հայոց զօրքերը վերայ հասան ու երախտ գեղը ձգելով՝ ջրահեղձ արին. Խոսրով դեռ չմեռած՝ հրամայեց կոտորել Անակի ընտանիքն ու տոհմը. այն կոտորուածից ապաստանեցին Անակի երկու որդիքը — մէկին, որի անունը Սուրէն էր՝ իւր դայեակները վախց՝ ին Պարսկաստան, իսկ միւսին՝ Գրիգորին՝ իւր քրիստոնեայ ստնտու ծծմայր Սոփիան փախցրեց Փոքր-Ասիայի (Դամբաց) Կեսարիա քաղաքը, և այնտեղ կրթեց քրիստոնէական հաւատով:

Մինչ այս միջոց այն, Արտաշիր Սասանեանը լսելով Խոսրովի մահը, բազմաթիւ զօրքերով եկաւ Հայաստան. բոլոր երկիրը տակն ու վերայ արեց և հրամայեց կոտորել Խոսրովի բոլոր ցեղը: Նախարարներից մինը — Արտաւազդ Մանդակունին — Խոսրովի Տրդատ որդուն վախցրեց դէպ ի Հռոմ, իսկ մի ուրիշը — Օտայ Ամատունին — Խոսրովի Խոսրովիդուխտ աղջիկը աղատեց և Բարձր Հայոց Անի ամրոցը առանձնացաւ:

Արտաշիրը երկիրը նուաճելուց յետոյ փախստականներին յետ դարձրեց և սկսեց երկրի շինութեան համար հոգալ: Խոսրովիդուխտը՝ Անի ամրոցում, իսկ Տրդատը՝ Հռոմում մեծանում էին, և պատրաստվում մի օր դառնալ Հայաստան թագաւորական վիճակով Հայաստանի մէջ մեծամեծ գործեր հոգալու:

Տրդատը հեռաւոր օտարութեան մէջ իւր սարսափելի ուժովն ու պատերազմական հմտութեամբը իւր վերայ դարձրեց բոլորի ուշադրութիւնը: Նորա համար դեռ մանկութեան ժամանակ ձիով աշտանակելը, յայտնակ ղէնք շարժելը և պատերազմի պատրաստութիւնը ամենասիրելի զբաղմունք էին: Հրապարակում մրցութեան ժամանակ մի օրեղ ըմբիշ հռոդացու վրից բռնելով յաղթեց, մի անգամ էլ երկու ամեհի ցուլերի եղջիւրները բռնելով պոկս ձգեց:

Երբ որ Խոսրովի որդին Տրդատ իւր այս անսովոր ուժեղութեամբ և զարմանալի քաջութեամբ օր աւուր առաջ էր գնում, Անակի որդին Գրիգոր իւր քրիստոնեայ Սոփի ստնտուի խնամքի տակ քրիստոնէական հաւատով մեծացաւ. ամուսնացաւ մի Դարիթ անունով քրիստոնեայ մայրու Մարիամ աղջկայ հետ, և երկու զա-

ւակ ունեցաւ. անդրանկի անունը Վրթանէս, իսկ կրտսերինը՝ Ս.-
լիատակէս:

Գրիգորն ու իւր ամուսին Մարիամը լրանց յօժար կամքով մի-
մեանցից բաժանուեցին. Մարիամը առնելով իւր փոքր որդուն՝
մնաւ կուսանաց մի վանք. մեծ որդին մնաց իւր դայեակների մօտ
և հասակն առնելով ամուսնացաւ. իսկ Գրիգոր՝ իմանալով որ իւր
հայրը սպանել է Տրդատի հօրը՝ Խոսրով թագաւորին, իւր հօր
յանցանքը քաւելու համար գնաց Տրդատի մօտ և սկսեց նորան
հաւատարմութեամբ ծառայել:

Երբ Գրիգոր հաւատարմութեամբ ծառայում էր Տրդատին և
Տրդատ չիմանալով թէ ով է Գրիգորը, ումի որդի է, իբրև իւր հա-
ւատարիմ սպասաւոր՝ սիրում էր նորան. հենց այդ ժամանակները
Պոմպէոս Հռչէ թագաւորը եկաւ Հռոմէացւոց դէմ պատե-
րազմելու, և այսպիսի պատգամ ուղարկեց Հռոմէացւոց Վիտե-
ղեոսիանոս կայսրին. «Ինչ հարկ կայ զօրքեր կոտորելու. ա-
հա ես ու դու, մենամարտենք առանձինն. եթէ ես քեզ կը յաղ-
թեմ՝ դուք հնազանդեցէք և ծառայեցէք ինձ. իսկ եթէ դու
կը յաղթես, մենք հնազանդենք քեզ»: Վիտելեոսիանոսը գիտենա-
լով որ Հռչէ չափազանց ուժեղ և լաւ պատերազմող է, սկսեց
մոռածել և յուսահատուիլ: Կանչեց իւր իշխաններին խորհուրդ
անելու թէ ինչ պէտք է անեն. իշխաններից մէկը Ալիլիանոս, որի
բանակումն էր ծառայում Տրդատը, ասաց. «Մի հոգալ, կայսր,
հեշտ է այդ գործը գլուխ բերել. որովհետև կայ այստեղ Տրդատ
անունով մէկը, որ կարող է քո կողմից անձամբ դուրս գալ Հռչէի
դէմ և յաղթել նորան»:

Վիտելեոսիանոս երբ որ առաջարկեց մենամարտել Հռչէի հետ,
Տրդատ սիրով յանձն առաւ. և որոշեալ ժամանակին կայսերա-
կան զարդերով սպառազինուած, դուրս եկաւ Հռչէի առաջ և
մենամարտութեան ժամանակ բռնեց Հռչէին ու տարաւ Վիտե-
ղեոսիանոս կայսեր մօտ: Կայսրը շատ ուրախացաւ Տրդատի քա-
ջութեան վերայ, իւր մեծամեծների առաջ գովելուց յետոյ՝ մե-
ծամեծ պարգևներ տուեց, և իմանալով որ Հայոց Խոսրով թագա-
ւորի որդին է, և թէ Արտաշրի կոտորածից ազատուելու համար՝
ապաւինել է դէպի Հռոմ, — թագաւորական թագ և ծիրանի տա-
լով՝ Հայոց վերայ թագաւոր կարգեց Քրիստոսի 286 թուին: Տրդատ
Հռոմէացւոց զօրքերով դարձաւ դէպ ի Հայաստան. Գրիգորը նո-

բա մծո էր և ճանապհումեր նորան, իսկ նա Գրիգորի հաւատարիմ ծառայութիւնը գնահատելով՝ սիրումեր առանց ճանապելու թէ ով է Գրիգորը։

Տրդատը երբ հասաւ Կեսարիա, նախարարներից շատերը նորա առաջը դուրս եկան, և Հայաստան հասնելուց յետոյ տեսնելով որ իւր քրոջը — Խոսրովիդխտին խնամարկել և իւր հայրական գանձերը մեծ համբերութեամբ պահել է Օտայ Ամատունին՝ նորան Հայաստանի հազարապետ կարգեց, իսկ իւր դայեակ Արտաւազդ Մանդակունուն՝ Հայոց սպարապետ նշանակեց։

Նախարարներին զօրքերի հետ ուղարկելով Արարատեան նահանգը, որ երկիրը պահպանեն, ինքն իւր բանակով Բարձր—Հայք նահանգի Եկեղեայց գաւառի Երիզայ կամ Երզնկա աւանը հասնելուց յետոյ, Անահտի մեհեանում ուխտ և մեծամեծ զոհեր արեց. որովհետև կռապաշտութեան ժամանակ Անահիտը համարվում էր Հայոց աշխարհի պահապան աստուածուհի. զոհերից յետոյ Տրդատը երբ ուրախացած էր, հրամայեց իւր հաւատարիմ սպասաւոր Գրիգորին, աւանց խմնալու թէ նա քրիստոնեայ է, ծաղկեպսակներ և պատիներ տանել Անահիտ չաստուածուհու մեհեանը. իսկ Գրիգոր հրաժարուեց, յայտնելով որ ինքն քրիստոնեայ է և միայն ճշմարիտ Աստուածուն պէտք է երկրպագութիւն անի, և ոչ թէ ձեռագործ կուռքերին։

Թագաւորը տեսնելով Գրիգորի դիմադարձութիւնը՝ զայրացաւ, դոյրացաւ և ասաց. «Այս ինչ է, Գրիգոր. չէ՞ որ մի օտարական և անյայտ մարդ էիր դու. եկար մեզ հետ միացար, հիմա ինչպէս ես համարձակվում այն Աստուածուն պաշտել՝ որին ես չեմ պաշտում. և հրամայեց նորին օրը բանտարկել։

Տրդատ տեսնելով որ Գրիգոր ամենևին չի կամենում լսել նրան ու կուռքերին երկրպագութիւն չի տալիս, հրամայեց չարչարել։ Տասն և երկու տարուվելի տանջանքներ տուին Ս. Գրիգորին. իսկ նա սուրբ հաւատի համար համբերութեամբ տանում էր այդ չարչարանքները։

Վերջապէս երբ որ Տրդատ Արտաւազդ Մանդակունու ձեռքով նորա քեռայր Աշոց գաւառի իշխան Տաճատից լսեց թէ Գրիգորը իւր հօրը ապանեդ, — որով և Հայոց աշխարհը պարսից իշխանութեան տակ ձգոլ Անակի որդին է, աւելի ևս բարկացաւ և Արտաշատու իշխան Մակենաի ձեռքով Գրիգորին ձգեց Արտաշատու

մահտարտոնների համար եղած Խոր — Վիրապի մէջ, ուր կացաւ նա տասն և չորս տարի։

Յետոյ, իւր ժամանակին կըպատմեմ թէ ինչպէս Ս. Գրիգոր Խոր — Վիրապից դուրս եկաւ, ինչպէս քարոզեց, և իրան այնքան հալածող ու չարչարող Տրդատին ինչպէս բժշկեց ու քրիստոնէական հաւատը ստրկեցնելով՝ մկրտեց։ Այս ամենը յետոյ։

Բայց մենք տեսանենք թէ Աստուած իւր սուրբերին աշխարհի մէջ բռնաւորների ու անօրէնների հալածանքի ու տանջանքի ժամանակ ինչպէս է օգնում ու մխիթարում.

Գրիգորը Խոր Վիրապի մէջ 14 տարի կացաւ. այն տեղ՝ ուր մարդիկ 14 օր անգամ չեն կարող կենալ։ Ի՛նչպէս կացաւ նա. ով էր նորան կերակրում. ով էր նորան մխիթարում։ — Աստուած։

Մեր ժողովրդի աւանդութեանը համեմատ՝ Աստուած մի ծերունի կնոջ սերտ գութ ձգեց. և նա ամենայն օր հաց էր ձգում վիրապի մէջ. Գրիգորը այդ հացի մի մասը ինքն էր ուտում, մի մասը փշրում էր և տալիս իրան շրջապատող գեւուններին։

Մեր եկեղեցու աւանդութեան նայելով՝ Աստուած մի հրեշտակի ուղարկում էր Գրիգորին սպասաւորելու և մխիթարելու։ Այդ հրեշտակը մի օր ուշացաւ, Գրիգորը կարծեց թէ Աստուած նորան բոլի թողի է արել. բայց Աստուած իւր սրբերին միշտ խնամարկում։ Հրեշտակը եկաւ. Գրիգորը հարցրեց ուշանալու պատճառը։ Հրեշտակը ուշացել էր, — որովհետև այդ օրը ասնումէլին երկընքում՝ Յիսուսի Համբարձումը։

Նեղութեան մէջ եղածներին օգնում ու մխիթարում է Աստուած մարդկանց ձեռքով. իսկ մենք, այդ մարդկանցից մէկն ենք։ Մեր կնոջ նման հայ տանք նեղութեան մէջ եղողներին. Աստուծոյ հրեշտակի պէս սպասաւորենք նոցա և մխիթարենք։ Այդ մեր պարտքն է. կատարենք մեր պարտքը, որ Աստուած մի արասչէ, երբ մենք նեղութեան մէջ լինենք, Աստուած ուղարկէ մեզ հոգեր հայ տուողներ ու մխիթարողներ։

Ահա թէ Ս. Գրիգոր Լուսաւորչի վիրապ մտնելու ծոնը որպիսի յիշատակներ է պարունակում իւր մէջ. և այդ նուիրական յիշատակների համար է որ այդ ծոնին հանդիսաւոր ժամերգութիւն է կատարվում. թէև մեծ պահի մէջ, բայց սեղանի վարագոյրը բոլոր են անում և մենք տեսնում ենք Ս. Գրիգոր Լուսաւորչի չարչարանաց պատկերը և իմանալով որ այդ չարչարանքները կրելով է

Նա մեզ կապակցութիւն խաւարից դէպ լ՛ քրիստոնէութիւն լոյսը առաջնորդել՝ երախտագէտ սրտով յիշատակութիւնք նորան և փափագով համբուրում նորա Ս. Մասունքը։

Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՐԱՖԱՅԷԼ ՍԱՆՏԻՈ.

(Զոր հոլթոր ածայ Յոքելեանի պոլիով. շրջանակ. թէս Ր. Բ.)։

—

Վիտրուվիոսը պէտք էր Րաֆայէլին, որպէս ճարտարապետի. և Ուրբինացի նկարչին ճարտարապետ շինեց նոյն ինքն Լէոն X ը պապական գահի վերայ նստելուց մի տարի յետոյ, երբ վախճանուեց Ծերուկ Բրամանտէն։ Լէոնը, համաձայն վերջինիս մեռնելուց առաջ արած խնդրքին, նշանակեց Րաֆայէլին կառավարիչ Ս. Պետրոս վանքի շինութեան՝ տարեկան 300 դուկատ ռոճիկ նշանակելով, յայտնի բանէ, չազատելով նորան դահլիճները նկարելուց։

Լէոն X ի կենդանութեան ժամանակ Րաֆայէլը վերջացրեց երկրորդ դահլիճի նկարելը, և այնտեղ նա պատկերացրեց «Լէոն պապի և Ատիլայի պատահելը» և «Ս. Պետրոսի բանդից ազատուելը» նա վերջացրեց այս փրէսքը, որ զարհուրեցնում է մարդու, թէ որպիսի ճարտարութեամբ լոյս հանած է այդտեղ։ Երրորդ դահլիճի նկարներից նորա վրձինին պատկանում է անշուշտ մի գլխաւոր պատկեր — «Քաղաքի հրդեհը», իսկ մնացած փրէսքները նկարել են նորա աշակերտները իւր նախագծով, անգամ նոցա վերջնական լաւութիւն տալու, ուղղելու նա ժամանակ չունէր։

Stanz չվերջացրած Րաֆայէլը պիտի սկսէր Loggie պատարանքի գալլէրէաները, որ մինչև XIX դարը բաց էին բոլոր քաղքենիների համար։ Օթեակները 52 պատկեր ունին, որոնց բովանդակութիւնը առած է հին և նոր կտակարանից. այդ, այսպէս ասած, Րաֆայէլի Աստուածաշունչն է, որ բաւական առհասարակներ կամ դրաւականներ են համեմատելու նորան Միքել Անջելոյի Սիքստինեան մատրան նկարչի հետ։ Մոայլ, տխուր ողբերգակին և քնարերգակին՝ (lyrique) Միքել Անջելոյին, հակառակ Րաֆայէլը խաղաղ էպիկէ, որ գերազանցում ուրախը, իդիլիան։

Վատիկանը նկարներով զարդարել, մի և նոյն ժամանակ վերահասու լինել Ս. Պետրոսի Տաճարի կառուցմանը, ամենագործօն մարդն էս կարող է կոչվել, բայց պապը և նկարիչը, ինչպես վերը յիշեցինք, ունէին

մէկ արարողական զօրութիւն։ Նոյն Րաֆայէլին Լէոն պապը յանձնեց իւր սիրած « Maglina » Վիլլայի զարդարելը և գորգերի համար նախագծեր պատրաստելը, որ պիտի զարդարէին Սիստինայի պարապ պատերը։ Րաֆայէլի տաղանդի համար անպատուութիւն չէր գորգերի համար նախագծեր պատրաստելը, սա փղի պատկեր կամ բեմական տեսարաններ նկարելը չէր,— գորգերի համար նախագծեր նկարուէին և Մանտէնիան և Լէոնարդօ դա Վինչին։

Այս 10 ը նախագծերի բովանդակութիւնը Րաֆայէլը ընտրել էր առաքեալների գործերը, և այն, երևի, ակամայ, սիւժետը անյաջող էր, որովհետև գորգերի համար հարկաւոր է մի որ և է գեղատեսիլ բան։ Արևելքի պատմութիւնից տեսարաններ, անգամ հին կտակարանից առաւել յարմար է։ Սակայն Րաֆայէլը անուշ էր կարելին։ Նա խորը թափանցեց իւր սիւժետների իդէայի մէջ. նորա առաքեալները մեծ մեծ մարդիկ էին պլէբէական տիպի. տեսարանների դասաւորութեան (composition) մէջ նա հասաւ դրամատիկականութեան կատարեալ զարգացման (օրինակի համար տես Անանիան), և երբ 1519 թ. Դեկտեմբերի 26-ին բոլոր գորգերը կախեցին, տարածուեցաւ ընդհանուր ոգևորութիւն, էնտուզիազմ։ Սորանից յետոյ գորգերը մօտ են դառնում և լիովին ենթարկվում են նկարչութեան կանոններին, Րաֆայէլի աշակերտը, Ջուլիօ Ռոմանօն, գորգերի համար հարիւրից աւելի նախագծեր է նկարում։

Գորգերը համեմատ Րաֆայէլի նախագծերին պատրաստվում էին Բրիւսէլում, և ամէն մէկը նստում էր պապին 6500 դուկատ, իսկ նա իւր աշխատանքի համար ստանում էր այս գումարից միայն 100 դուկատ։ Սակայն նորա աշխատութիւնները պապի համար, նոցա հետ հաշուելով և սկուտղների նկարները անուշահոտութեան արկղների, չէին խանգարում աշխատասէր Րաֆայէլի գործունէութեանը։ Պապից յետոյ երկրորդ պատուէրատուն էր բանկիր Ագիին, որ ոչ ուսեալ էր, ոչ էլ լուսաւորուած, բայց ունէր լաւ ճաշակ և հայեացք։ Նորա պատուէրով նա նկարեց Madonna della Pace եկեղեցում իւր Սիվիլլաները և համաձայնուեց նկարներով զարդարել նորա Տրանստեվերինի Վիլլան։ Այդ է նկարել նա իւր նշանաւոր Գալատէան *) և Պսիխէի սրահը զարդարել։ Պսիխէի պատմութեան ֆրէսներում աւելի, քան ուր և իցէ, պարզ երևում է, թէ որքան մեծ է Րաֆայէլի յօրինուածների արարողական ոյժը, թէ որքան ազատ էր վերաբերվում իւր աղբիւրներին։ Նա իւր սիւժէտը (բովանդակութիւնը) առել է, ինչպէս յայտնի է, Ապուլէյի « Միտամորֆոզներից », որի

(*) Սիւժէտը առած է Պոլիցիանի « giostro » Պոլիմայից (1 հրատ. 1494 թ.)։ Համապատասխանող տողերը ստանում ենք։

Due formosi deffini uno carro tirano
Fovr' eno è Galatea, che il fren correge

Իտալական թարգմանութիւնը հրատարակուել է 1500 թ. Ապուլէյը սկէպտիկ է. նա հանդէս է հանել աստուածներին այնպէս, ինչպէս և Օվիդիոսը «Օրիէյում»։ Բաիայէլը վերածնման մարդկանցից էր. նա չէր կարող իրան սեփականացնել այդպիսի հայեացք և իր նկարներում նա միջին տուեց աղնուութիւն և վեհութիւն. Վեներային, որին Ապուլէյը նկարագրում է «լաց լինող, հեկեկող և նախանձից դողացող», նա տալիս է օլիմպիական հանդարտութիւն, նա դեռ առաջ է գնում—միջին, նա աղնուացնում է տալով նորան քրիստոնէական իդէան Պսիխէան, որ վերանում է դէպի երկինք ձեռքերը անխռով լանջի վերայ ծալած, նա նկարել է նորան որպէս տանջուած. Ինքըն ըստ ինքեան յայտնի է, որ Կիջիի Վիլլայի համար և Բաիայէլը տալիս էր միայն նախագծեր, իսկ աշակերտները շինում, պատրաստում էին։

Բաիայէլը ժամանակ էր ունենում կատարել և ուրիշների պատուէրները՝ դրել իւղաներկ նկարներ. Հռոմէական շրջանի երկրորդ կէսին, այսինքն Լէոն X-ի ժամանակին, պատկանում է «խաղի տանելը» (spasimo di Sicilia) անունով պատկերը, որի մասին համարեա թէ դեռ Բաիայէլի կենդանութեան ժամանակ մի ամբողջ աւանդութիւն է կազմուում։ Նա նկարում է այդ պատկերը Պալերմոյի մի վանքի համար և նաւով ուղարկում է պատկանելի տեղը։ Փոթորիկը չախչախում է նաւը, սակայն Նախախնամութիւնը հոգս է տանում սքանչելի պատկերի համար. այն արկղը, որի մէջ գտնվում է պատկերը, անփորձ ու անվըտանգ հասնում է Գէնուայի ափը, և երբ բաց են անում, ջրից անվըտանգ մնացած հրաշալի արուեստագործութիւնը փայլում է։ Գտնուած պատկերի մասին համբաւը տարածվում է ողջ Իտալիա. իմանում են պատուէր տուած կրօնականները և պապի միջնորդութեամբ պահանջում են։ Հետաքրքիր է նմանապէս այդ պատկերի ապագայ եղելութիւնները, թէպէտ նման էին իտալական rinascimento մեծ գործերին. Իտալիոյ քաղաքական և բարոյական անկման ժամանակ Իսպանացոց Փիլիպպոս IV թագաւորը այդ պատկերի համար վճարեց 1000 սկուդի և տարաւ նորան Մադրիդ։ Իսպանական պատերազմի ժամանակ նապօլէօնը հաւաքում է Գալլերէան, ինչպէս և առաջ Վատիկանը և բերում է Spanimo—Լուվր. Ցաղթելով նորան, դաշնակիցները վերադարձնում են պատկերը Իսպանիա, ինչտեղ և այժմ է։

1513 թ. մի Բօլոնացի տիկին երազ է տեսնում, իբր թէ երկնքից մի ձայն հրամայում է նորան կառուցանել մի տաճար, սուրբ Ցիցելիայի անունով։ Իր կարգինալ հօրեղբոր միջնորդութեամբ նա պատուիրում է Բաիայէլին մի պատկեր այս մտադրան համար, որ նա վերջացնում է 1516 թ. այս նորա նշանաւոր պատկերն է—«սուրբ Ցիցելիան», որի վերայ պատուէրի սքանչելի մտիվը այնպէս յաջողակ միաւորուած է երկրաւոր, բայց բարձր գեղարուեստական Իդէայի հետ—մուզիկայի

ապօֆէօզները։ Այս պատկերի մասին Վազարին յայտնում է մի աւանդութիւն. Րաֆայէլը, ուղարկելով այդ պատկերը Բօլօնիա, խնդրում է իր բարեկամ նկարիչ Ֆրանչեսկին, որ նա նայէ, թէ ինչպէս պիտի տեղաւորուն և եթէ ուղղելու բան լինի, ուղղէ։ Ֆրանչեսկոն բոլորովին ապշած լինելով պատկերի գեղեցկութիւնից, մեռնում է վշտից, որ ինքը չէ կարող այնպէս նկարել։ Այս աւանդութեան ծնունդ տալու և տարածելու պատճառը է Ֆրանչեսկի մահը 1517 թ. սկզբներում։ Մահը, որ շատ լաւ բացատրում է նորա յարգելի հասակը և տարիքը. նա 67 տարեկան էր։ 1517 թ. պապի աղդական Յուլիոս Մեդիչին, որ նոր նշանակուած էր Նարբոննայ եպիսկոպոս, պատուիրեց նկարել երկու պատկեր այդ քաղաքի մայր եկեղեցու համար. մէկը Վենետկեցի Սկբաստիանին «Ղազարոսի յարութիւնը» միւսը — Րաֆայէլին։ Րաֆայէլը, ինչպէս երևում է էսկիզներից, մտադիր է եղել նկարել «Քրիստոսի յարութիւնը», բայց յետոյ, պատճառը անյայտ է, փոխել է դիտաւորութիւնը և սկսել է նկարել «Ալլակերպութիւնը» իր ամենանշանաւոր պատկերներից մէկը, իր «Հոգևոր կտակը» թէպէտ և մահը արդելք է լինում նորան այդ պատկերին վերջականութիւն տալու։ Այս պատկերի կոմպոզիցիայում Րաֆայէլը ցոյց է տուել սաստիկ մեծ համարձակութիւն և ճարտարութիւն։ Այդ պատկերը երկու տեսարան է ներկայացնում, այնտեղ վերևում, Թաբոր լերան վերայ կատարվում է ալլակերպութիւնը. Քրիստոս Եղիայի և Մովսիսի մէջ տեղումն է, նոցա ոտքերի մօտ են երեք առաքեալները, իսկ ձախ կողմում նայողից — Սուրբ Լաւրէնտիոս և սուրբ Յուլիանոս ծնկների վերայ, — Հօրեղբօր և պատուէր տուող Հօր պադրօնները։ Յածում, լերան ստորոտում, մի քանի առաքեալներ են և ամբոխ, որոնք պատել են դիւահար մանկան, որին ծնողները բերել էին առաքեալների մօտ բժշկելու։ Առաքեալներից մէկը միաւորում է երկու խումբը, վերինը և ներքինը, մի ներդաշնակ ամբողջութիւն. նա ցոյց է տալիս երեխայի ծնողներին դէպի վերև, կարծես, ասում է. «ահա ինչ տեղից դուք պէտք է սպասէիք փրկութիւն»։ Երկու պլանները երկնքի և երկրի հակառակութիւն են ներկայացնում. երկրիս վերայ — տանջանք և շփոթմունք է, իսկ վերևում լոյս, խաղաղութիւն և բերկրանք։ Ալլակերպութեան հետ կպցնելով և դիւահար մանկան բժշկութիւնը, Րաֆայէլը չէ մեղանչել պատմական ճշմարտութեան դէմ, այդ երկու տեսարանները էլ նկարագրել է Մատթէոս աւետարանիչը 17 գլխում։

Հռոմէական շրջանի այս երկրորդ կէսին պատկանում են մի քանի մադոննաներ։ Եւ այժմ հասած լինելով ամենաբարձր փառքին, Րաֆայէլ գարձեալ ամենայն հոգատարութեամբ պատրաստվում էր նկարների, երկար մտածում էր, էսկիզներ էր անում, մի քանի անգամ նա նկարում էր բնականից կիսամերկ կանայք դիւղական հագուստով։ Տարօրինակ պատահմամբ մեզ չէ հասել Րաֆայէլի կատարելագործուած

մադոննաների էսկիզներից ոչ մեկը և շատերի կարծիքով, վերջին—Սիքըստինեանինը կարծես, այդ աստուածեղէն գործը հրաշքով է երևացել։

Իւր վերջին տարիներում Ռաֆայէլը շատ էր պարապում արխիտեկտուրայով, շատ գոհ լինելով, որ տացել էր Բրամանտէի տեղը։ Ի նկատի առնելով սուրբ Պետրոսի բարձրաբերձ շինութիւնը. նորա պլանով մի քանի եկեղեցիներ շինուեցան, պարարանքներ ու վիլլաներ, բայց մայր եկեղեցու համար նա չկարողացաւ շատ բան անել։ Նա պատրաստումէր նկարներ քանդակագործների համար, անգամ մի ժամանակ լուր էր տարածուել, որ Ռաֆայէլը յանձն է առել քանդակել, և այս լուրը սոսկալի ազդեցութիւն ունեցաւ Ռաֆայէլի նշանաւոր հակառակորդի՝ Միքել Անջէլոյի վերայ։

Հռոմում, նա մանաւանդ Լէօն X-ի օրով, Ռաֆայէլը սկսաւ լաւ ուսումնասիրել հնութիւնները. «յաւիտենական քաղաքում» դեռ մնացել էր ահագին քանակութիւն ֆրէսքների. պապի թանգարանում կային և Բելվեդերեան Ապոլլօնը, և Լաօկօօնը, և Հերքիւլէսի արձանի իրանը. այստեղ կային շատ մասնաւոր մուսէօններ։ Հետևելով իւր հանգուցեալ հովանաւորին, Բրամանդէին, Ռաֆայէլ բոլոր հնութիւններից հանումէր կամ պատուիրում էր հանել կօպիան և մեծ միտք էր յղացել՝ վերականգնել հին Հռոմը նկարներով։ Կասկածանք պէտք չէ լինի, որ խոհուն կերպով ուսումնասիրելով հնութիւնները՝ նա եղաւ շկոլայի իսկական գլուխը, առանց նորան կարող էր միայն անհասանելի օրինակ լինել տաղանդներին, նորա ազդեցութեան շնորհիւ ծագեցին գեղեցկութեան կանոնները. նորա շնորհիւ Ռաֆայէլը մինչև օրս բոլոր նկարիչների համար մեծ ուսուցիչ է։

1515 թ. Ռաֆայէլը, գործերի մէջ թաղուած լինելով, ժամանակ չէ ունենում իւր արհեստանոցը թողնել գոնէ մի երկու շաբաթ։ Իսկապէս նորան, այսպէս ասած, պաշարումէին հարուստները հիմնարկութիւնները, և թագաւորները իւրեանց պատուէրներով. վերջիններս շատ անգամ սպառնումէին նորան վրէժխնդրութիւն, եթէ նա նոցա չի յարգել իւր պատկերով, նա աշխատում էր մի կերպ ազատուել նոցա ձեռքիցը. նուիրում էր, ինչ որ կարող էր, անգամ նախագծեր։ Նա գրաւական չէր առնում, կարծես, հաւատացած էր, որ երկար չէ ապրելու։ Բացի դորանից նա փողի կարօտութիւն չուներ. նա չէր կարողանում մսխել իւր վաստակը։ Լէոն X-ը նշանակեց նորան իրան կամերգեր և ասպետ, մի քանիսների ասելով, նա մօտ ապագայում պիտի դնէր կարդինալի կարմիր գլխարկը, սակայն Ռաֆայէլը չէր շտապում հեռանալ իւր արհեստանոցից և աշակերտներից։ Երբ նա տանից դուրս էր գալիս, նորան միշտ պատուէր 50 մարդուց մի խումբ, որոնք որսումէին իւրեանց ուսուցչի իւրաքանչիւր խօսքը *). այդ խմբի մէջ

*) Յայտնի է մի անեկդօտ, որի համար կարելի է ասել իտալական մի առած "se non è vero, è ben trovatos,,՝ Միքել Անջէլօն, պատահելով Ռաֆայլին, ասում է

լինում էին արդէն անուն ստացած նկարիչներ, որոնք Րաֆայէլից յետոյ դեռ երկար ժամանակ նկարում էին և հասակով նորանից մեծ էին։ Նոցա մէջ կային մի քանի փորագրողներ, որոց թւում էր և անուանի Մարկոս Անտոնիո Րայմոնդին, որ Րաֆայէլի նախագծերը և փոքր ի շատէ վերջացրած էսկիզները հազարաւոր տպագրութեամբ տարածում էր ողջ Իտալիայում և Եւրոպայում։ Ամենաընդունակ նկարիչներին զանազանում էր նորանով, որ իւր աշխատակից էր լինում։ Նորա աշակերտները, ինչպէս այն ժամանակ սովորութիւն էր, ապրում, ուտում, խմում էին Րաֆայէլի մօտ։ Բրամանդէի տունը, որ ճարտարապետի մահից յետոյ նորան ժառանգութիւն հասաւ, բաւականութիւն չէր տալիս, նեղուածք էր, և Րաֆայէլը ստիպուած էր վարձել կից տները։ 1520 թ. սկզբներում գնեց մի մեծ կտոր հող քաղաքի ամենալաւ թաղում և պատրաստութիւն էր տեսնում կառուցանել իսկ palazzo։

Բայց բախտը, կարծես, կամենում էր մատնացոյց անել Րաֆայէլի վերայ, իբր թէ ինքը նորան միշտ ողորմածութեամբ է վերաբերում իւր միջնորդութեամբ. այժմ կարծես նա սպառուել էր իւր ճշմարիտ հանճարին հատուցանելի սովորական պայմաններից։ Մարտի 24-ին Րաֆայէլը ստորագրում է հողատէր լինելու պայմանաթուղթը, իսկ մի քանի օրից պառկում է՝ հիւանդացած լինելով Հռոմի չարաբախտիկ տենդից, որ մահ էր սպառնում նորա թուլամորթ կազմուածքին և ուժասպառ գործարաններին *)։ Ողջ Հռոմը հետաքրքրւում էր, թէ ինչով կըվերջանայ նորա հիւանդութիւնը. պապը օրեկան մի քանի անգամ մարդ էր ուղարկում տեղեկութիւն ստանալու։ Բայց Րաֆայէլը առաւել ևս թուլանալով արիւն թափելուց, զգաց մահը և կազմեց կտակը. իւր պատկերները և էսկիզները նա թողեց իւր երկու սիրելի աշակերտներին. կայքը, որ մեր փողով կարժենար մինչև 300000 րուբլի, մասամբ թողեց ազգականներին, մասամբ ծառաներին, մի մասն էլ գերեզմանի վերայ մատուռ շինելու։

նորան «դու ճեմում ես որպէս ղօրապետ շրջապատուած ամիրայով։—Իսկ դու միայն թափառում ես, որպէս դահիճ,» որպէս թէ պատասխանել է Րաֆայէլը, որ այս անգամ աւաւել յարմար պատասխանել է քան թէ սիրելի է եղել։

*) Վազարին նորա ուժասպառութիւնը վերագրում է ուրիշ առաւել անազնիւ պատճառի. Րաֆայէլը սպասում էր, պէտք է ասած, իւր համար ոչ այնքան հաճելի հարսանիքի. կարգնում Բիբիէնի եղբօր աղջկայ հետ con tinuo fuor di modo i pia ceri amorosi, իսկ ապէտ բժիշկները նորանից արիւն թողին։ Մի ուրիշ տեղ Վազարին խոսում է նորա սիրեցեալի վերայ, որին նա լաւ վարձատրելով կտակը կազմելուց առաջ, արձակել է։ Վազարին նորա անունը չէ յիշում. XVI դարու երկրորդ կէսի մի աւազակային խոսքով նորա անունը Մարգարիտա էր։ Ֆօրնարին (կին — հացթուխի) մականունը, եւ նորա մասին պատմածները ուշադրութիւններ են։ Այսպէս ասած, նորա կենդանագիրը, որ գտնվում է Ufpizi-ում Sebastiano del Piombo պատկերն է։ Ֆերրարեան հերցոգի դեսպանը գրել է իւր թագաւորին, Րաֆայէլ è morto di una febre continuata cacuta, ehe gia octogiorni l' assaltò

Րաֆայէլը մեռաւ սուրբ Հարիսթոսի շաբաթու ուրբաթ օրը. Ապրելի 6-ին 1520 թ. ճիշդ 37 տարեկան հասակում։ Ողջ Հռոմի ինտելլիգենցիան խոր շարժուած էր նորա վաղահաս մահուամբ. պապը դառնագին արտասուք էր թափում։ Ժողովրդի մէջ իսկոյն յօրինուեց աւանդութիւն, որ նկարչի մահի հետ երևեցել են զանազան ճեղքուածներ և վնասներ պապի ապարանքում։ Նկարչի մարմնի կողքին, ասում Վազարին, հանդէս էր հանած նորա չըվերջացրած պատկերը՝ «Ալլակերպութիւն», և պատկերի կենդանութիւնը, որ արտադրել էր ճարտար ձեռքը, և նորա ստեղծողի մեռելութիւնը կամայ ակամայ ստիպում էր հանդիսականին վշտաբեկ սգալ։

Րաֆայէլի դագաղը շրջապատել էին բոլոր նշանաւոր արուեստագէտները և նկարիչները առանց խտրելու իրանց մասնագիտութիւնը։ Իտալիոյ շատ բանաստեղծները ողբացին նորան Լատինական և Իտալական ոտանաւորներում։ Նորանով բանաստեղծները կորցրին ամենամեծ նկարչին, մարդկային կեանքի զովարարը. նոքա կարող էին մխիթարուիլ նորանով, որ նորա հոգու ամենալաւ մասը — նորա ֆրեսքները ու պատկերները մնացին գալոց սերունդների համար։ Բայց աշակերտները չըզրկուեցին միայն հանճարաւոր վարպետից, — նոցա համար նախ և առաջ նա մարդ էր։ Նորա համակրելի անձնաւորութեան շնորհիւ, այս համարեա յիսուն մարդից բաղկացած ամբոխը մի սերտ ընտանիք էր կազմում, առանց նախանձի ու խռովութեան, իսկ յայտնի է, որ նկարիչները — gens rixarum cupidissime են. ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այս մարդիկը համարեա իսկոյն զանազան կողմեր ցրուեցին, բայց նոքա բոլորեքեան ողջ կեանքը յարգանքով էին յիշում իրանց ուսուցչին։ Ջուլիո Ռոմանոն և Ջովաննի դ'Ուդինո իրանց որդուց նորա անունը տուին. Ջովաննին անդամ կտակեց, որ իրան անպատճառ Րաֆայէլի կողքին թաղեն։ Րաֆայէլի մահից 22 տարի յետոյ նորա մի քանի աշակերտները հիմնեցին մի ընկերութիւն «Congregazione dei vertuosi» որ մինչև այժմ ևս գոյութիւն ունի։ Կարելի է առաջ բերել առաւել ուրախալի երևոյթ 1527 Հռոմի նուաճուիլը սնանկացրեց մի հանճարեղ նկարիչ Perino del Vaga, նորա ընկեր Բավիէրի, որ միասին ուսանում էր նորա հետ Րաֆայէլի մօտ, յանուն իւր անմոռաւի ուսուցչին, իսկոյն օգնութեան հասաւ։ Եթէ Րաֆայէլի ոչ մի պատկեր մնացած չըլիներ, ոչ ոք չէր ասիլ, թէ նա իզուր ապրեց. դագաղից ևս ունենալ այսպիսի ազդեցութիւնք կարող է միայն շատ լաւ մարդը։ Մարդկութեան կեանքը այն առաւելութիւնը ունի անհատի կեանքի առաջ, որ առաջնի ծերութիւնից, զառամութիւնից յետոյ մահ չէ լինում, այլ նոր կեանք։ Մարդկութիւնը որպէս և Անդրասը, դիպչելով գերեզմանի հողին, վերանորոգում է իւր ոյժը։ Այսօր կեանքը, բոլոր ձևերը մեզ այնքան հնացած են թվում, բոլոր իդեանները այնքան գզգզած, ղղուած, իդեալները — անհասանելի, որ մարդս ձնվում ծեր, ապրում առանց

կրօնի և սիրոյ՝ և ժննեայ հայեացքով, դէպի գերեզմանն են դիմում։ Վաղը կրծադէ նոր կեանքի արշալոյսը, բոլոր մարդոց սրտերը կըլցուէն ճէ՝ հաւատով ճէ յուսով, և նոքա զուարթ կրհետևեն եռանդուն առաջնորդներին իդէալներ կրողներին՝ յառաջ և յառաջ։ Այսպիսի ժամանակներում լաւ մարդիկ շտապելով են ապրում։ Ներքին կրակից շուտով այրվում են նոցա լարուած ոյժերը և նոքա մեռնում են առանց դառն զգացմունքի։ շատ բան արդէն արուած է։ առաւել ևս մնում՝ անելու։ բայց՝ իրանց անձամբը դատելով՝ նոքա հաստատ հաւատում են գալոց սերունդների եռանդին։ հաստատ հաւատում են յառաջադիմութեան։ Ահա ինչու այսպիսի ժամանակների ներկայացուցիչները յաճախակի երիտասարդներ են լինում կամ իւր պաշտօնից կամ՝ դերից զրկուած ընկած մատաղահաս մարդ, որպէս Ալէքսանդր Մակեդոնացին, Թիրօնդայի հռետորները, Պերիկլէսը, Սցիպիօնը, Մեծն Պետրոսը, կարծես, դոքա ամենքն էլ ինչպէս և Աքիւլլէսը, գերապատեցին կարճատև, բայց փառաւոր ժամանակամիջոցը երկար զառամութիւնից։ ահա ինչու համար նոր դարերիս քրիստոնեաները ընտրել են իրանց բարի հովուի իդէալն արտայայտելու համար գեղեցիկ երիտասարդի դէմքը։

XVI դարու սկիզբը — այդպիսի երիտասարդութեան համար յափրշտակուելու և յոյսերի դար էր, նամանաւանդ գիտութեան և արուեստի վերաբերմամբ։ Կարելի՞ է առաւել լաւ ներկայացուցիչ գտնել նորան, քան իդէալական գեղեցիկ երիտասարդ Թաւշեայ բերետով երկար մազերի վերայ, քնքոյշ-մեղմ ժպիտը երեսին, ոգևորութեան կայծը սև խոհուն աչքերում, որի դէմքը միանգամ տեսնելով, մարդուս յիշողութեան մէջ մինչև մահ մնում է որպէս գեղեցկութեան քուրմի իդէալ նկարչի կերպարանք։ Եթէ Րաֆայէլը աշխարհ չէր գար, արուեստը պիտի հնարէր նորան։

✗ (Թարգմ.) Ռէմէ.

Մոսկուա

Ե. [1])

ՀԱՑՈՑ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ.

—

Ցառաջ քան թէ կրսկսէի խօսել Հայերիս քրիստոնէական եկեղեցու կազմակերպութեան մասին, յարմար եմ դատում մի հարևանցի հայեացք ձգել մեր՝ քրիստոնէութիւնից յառաջ ունեցած կրօնական պաշտամանց վերայ։

Այն ուղղութիւնը որ տրուած է մեր նահապետական պատմութեան շրջանին՝ կարողէր նոցա դարու ոգին համարուել՝ եթէ մեր պատմութեան Հայր Մովսէս Խորենացին ապրէր գոնէ Վաղարշակ Ա. Թագաւորի օրով. բայց որովհետև նա ապրում էր քրիստոնէական շրջանի այն դարում, որ շատ զգոյշ էր հեթանոս ազգերի վարք ու բարքի և կրօնական պաշտամանց մասին, — շատ հասկանալի է, որ Մովսէս Խորենացին մեր նահապետական շրջանի պատմութիւնը իւր դարու հոգւոյն համապատասխան է նկարագրել։

Հայաստան աշխարհը իւր շատ առանդութիւններով և աշխարհագրական անուններով կապուած է նախամարդոց ստեղծագործութեան, համատարած ջրհեղեղի և Նոյի հետ. այս իսկ պատճառով ոչ միայն Մովսէս Խորենացին, այլ և շատերը մեր պատմաբաններից մինչև մեր օրերը պնդում են որ, Նոյին հետևելով՝ մեր ազգի առաջին նահապետները ճշմարիտ աստուածապաշտ էին, և որ առաւելն է, միակնութիւն ունէին։

Մինչդեռ Հայերը իրանք իրանց մէջ էին ապրում, նոցա կրօնական պաշտամունքը շատ պարզ էր, բայց երբ սկսեցին օտարների հետ յարաբերութիւն ունենալ, սկսեց նոցա կրօնական պաշտամունքը հետզհետէ բազմանալ։

Արայի և Շամիրամի յարաբերութիւններից արդէն յայտնի է որ, Հայերը հասատուէին դիւթութեան, Անուշաւանի կամ Սօսանուէրի պատմութիւնից երևում է որ, Հայերը առանձին յարգանք էին մատուցանում Արմենակի անտառի սօսիներին, և ծառերի սօսափիւններին (խշշոցին) նայելով հմայութիւն անում։

Թէ Մովսէս Խորենացին շատ զգուշաբար է վարուել — մեր նահապետական շրջանի մասին խօսելիս՝ այդ նորանից յայտնի է որ, Հայկի բերանից այնպէս է խօսում, որ իւր ժամանակի մարդիկ հաւիւ կարող էին այն տեսակ մտածել. (Զի կամ մեռցուք ևքն). Արա գեղեցկին այնպիսի բարոյականութեամբ է նկարագրում, որ այժմ ևս հաղուագիւտ է։ Արամի համար ասում է «լաւ համարէր զվեռանելն ի վե-

---

(1) Շարադրութիւնն է մեր նախորդ յօդուածներին Աղբիւրները, որոնցից օգուտ քաղուած՝ չեն յիշուում։

րայ Հայրենեացն՝ քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս Հայրենիս, և Հարազատից արեան նորա տիրել արանց օտարածնաց »։ Ա յսպիսի կատարելութիւներ այն դարու մարդոց մասին շատ հազուագիւտ պէտք է համարել։

Մովսէս Խորենացի մեր նախկին նահապետների պատմութիւնը գրելիս շուտ շուտ կրկնուէ. « Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս »։ ի հարկէ շատ թանկագին նիւթեր կարող էին լինել այդ անգիր զրոյցների մէջ, որ Մովսէս Խորենացին զանց է արել զգուշութեան հետևելով։

Որչափ հնար է եղել հետևցնել, Հայերը իրանց կրօնական պաշտամանց ձևերը մեծ մասամբ դուրսից են ստացել և դրսեցւոց հետևողութեամբ կատարել. զօ. եթէ Շամիրամ չըլինէր՝ Արայի դին Յարաչէզները չէին լինիլ ևլն։ Որչափ և Հայերի կրօնական պաշտամանց վերայ մեծ ազդեցութիւն են ունեցել շրջակայ տիրող ազգերը, չէ կարելի ասել թէ Հայերը չեն ունեցել սեպհական գոնէ պարզ պաշտամունք։

Հաւանական է կարծել որ Հայկազանց հարստութեան ժամանակ Հայերը եղել են բնապաշտ, այսինքն, բնութեան երևոյթներին երկրպագու։ Եւ որովհետև ճարտարապետութիւնն ու գեղարուեստը Հայաստանում նախանձելի նրբութիւն չունէին, վանորոյ և արձանների կամ կուռքերի գործածութիւնը Հայաստանում՝ չըկար։ Բնութիւնը պաշտուէին Հայերը արհաւիրքից վախենալով և գեղեցկութեամբը զմայլելով։

Վահագնի պատմութիւնը իւր ծննդեան և կենաց նկարագրութեամբ Հայոց նախնական կրօնի վերայ փոքրի շատէ լոյս է սփռում և դորա պատմութիւնից մենք իմանում ենք թէ նորա անդրին—չափ հասակին (Խոր. Գիրք Ա. գլ. ԼԱ.) Վրացիք իրանց աշխարհում կանգնեցնելով՝ պաշտուէին։—Վահագնի պատմութիւնից յայտնի է որ քաջագործ և գիւցազն մարդկանց Հայերը աստուածային ծագում էին տալիս։ Ինչպէս երկինքը՝ որ Հայերի Հայր աստուածն էր համարվում, երկիրը՝ որ նոցա մայր աստուածը, իսկ ծերունի ծովը՝ բնութեան պաճուճելի տիպը ևայլն. Վահագնի ծննդեան համար երկունքի ցաւով բռնուած են նկարագրում առասպելները։ Զրադաշտական կրօնին հետևելով՝ Հայերը չար և բարի հոգիների գոյութիւն էին խոստովանում. բարի մարդկանց ծնունդը բարի հոգիների հսկողութեան տակ, իսկ չարերինը՝ չար. այդ հոգիների բնակավայր համարվումէր աջատ Մասիս լեռը, (Խոր. գիրք Ա. գլ. Լ.) որ ըստ Խորենացւոյ հաստատվումէ Գողթնեցւոց Թուելեաց երգերով։ Հայ հեթանոսական կրօնի մասին հատընտիր շատ սակաւ տեղեկութիւնները կարելի է քաղել Խորենացուց, որ շատ զգուշութեամբ թեթև ակնարկութիւն անելուց յետոյ, սկսումէ մեկնաբանութիւնը, զօր. վիշապների ակնարկութիւնը անելով՝ անմիջապէս սկսումէ Աժդահակի պատմութիւնը և առհասարակ կրօնական պաշտամանց մասին

կամենալով լուսթիւն պահել՝ յանդիմանուէ Սահակ Բագրատունուն և նորա տարփանքը մանկական ձգտումն է համարում։ (Խոր. Ա. Գիրք Պարսից առասպելք)։

Որչափ և Խորենացին զգուշութիւն է պահպանում, այնու ամենայնիւ նորա մեզ ասանդած հատ ու կտոր տեղեկութիւններով հաստատվում է որ, Հայերը Հայկազեան Հարստութեան ժամանակ քանի դեռ Աստրեստանցւոց չէին հպատակել, պարզ բնապաշտ էին, բնութեան երևոյթներ էին պաշտում։ Մեծապէս հաւատում էին գուշակութեանց և հմայութեանց, որ կատարվում էր ծառերի սօսափիւններով և թռչունների շարժմունքով՝ որ կոչվում է հաւհմայութիւն։ այնպէս որ, մինչև այսօր ևս իբրև աւելորդապաշտութիւն աքաղաղի անժամանակ կանչելը, հաւի անբնական ձայն հանելը վատ նշան է համարվում, կաչաղակ թռչունի ոստոստելով տան շուրջը թռչելը՝ հիւր գալու նշան, բուն՝ իսկապէս մահուան գուշակ, և որ տան վերայ նստումէ նա. անշուշտ հաւատումեն թէ, այդ տանը մի վնաս կը հանդիպի։ Այս նախապաշարումները մինչև ցայժմ էլ կան։

Այսպէս երբոր Հայերը Աստրեստանցւոց հետ սկսան յարաբերութիւն ունենալ, նոցանից մի քանի կրօնական պաշտամունքներ ստացան, և սկսեցին պաշտօն մատուցանել Ծարալէզ կոչուած ոգուն, որի պաշտօնն էր պատերազմի մէջ վիրաւորուած մինչև անգամ սպանուած դիւցազների վէրքերը լզելով՝ առողջացնելը։

Երբոր Մակեդոնացիք Պարսից յաղթելով Հայաստանին ևս տիրեցին, յունական պաշտամունքն էլ ունեցաւ Հայաստանում իւր հետևանքը։

Արշակունեաց օրով արդէն հայերի կրօնական պաշտամունքը բաւական բաղադրեալ էր և նորա արեգակին պաշտում էին ու կրակին յարգում՝ ոչինչ խորութիւն չըդնելով զանազան պաշտամանց մէջ։ և դարերով առաջ Հայաստան գաղթած Հրէաները ունէին իրանց ազգային կրօնն ու ծէսերը։ նորա թլպատվում էին, շաբաթ օրերը սուրբ էին պահում և զոհեալ միս չէին ուտում։ (Խոր. գիրք Բ. գլ. Թ.) մինչև որ Արշակ Ա. Հայոց Արշակունի թագաւորը արգելում դոցա իրանց հայրենական օրէնք պաշտելը։

Արտաշէս Ա. Արշակունին արշաւելով փոքր Ասիայի յունական գաւառները, Ցունաց աստուածների պղնձաձոյլ ոսկեզօծ արձանները բերեց Հայաստան։ Արդէն մեհենական պաշտամանց պաշտօնեայ նշանակուած էր Վաղարշակից Վահագնի սերունդը Վահունի կոչմամբ։ Արտաշէս Հելլադայից ևս արձաններ հանդերձ քրմապետներով բերում Հայաստան։ և այդ քրմապետները բնակութիւն են հաստատում երկրի սահմանագլխի քաղաքներում։

Կրօնական պաշտամանց գլխաւոր կենդրոններն էին Բագաւան, Աշտիշատ, ամուրն Անի, Երիզա և Ն։

Հեթանոս Հայերը բարի և չար ոգիների գոյութիւն էին ընդունում, որոնց և կոչումէին Քաջք և Վիշապ։ Քաջքերի և վիշապների բնակարանը համարվումէր Մասիս լեռը՝ որ ահ և սարսափ էր բերում երկրաշարժի ժամանակ իւր ստորերկրեայ գոռումներով։

Բացի Ցուն աստանից բերուած կուռքերը, Հայերի պաշտած նշանաւոր աստուածներն էին

Արամազդ՝ որ համարվումէ հայր և կառավարիչ

Անահիտ աստուածուհի, որ Հայաստանի խնամակալն էր համարվում և զգաստութեան ու իմաստութեան մայր։ դորա մեհեանը Երիզայում էր։ իսկ աթոռը Աշտիշատում։ Սորա պաշտամունքը շատ ընդհանրացած էր։ Սորա պատուանուններն էին Ոսկեմայր, Ոսկեհատ, Ոսկեծին։

Աստղիկ աստուածուհի, գեղեցիկ և գեղեցկութեան ու սիրոյ խնամակալ։ Աստղկան մեհեանը գտնվումէր Աշտիշատում և կոչվումէր Սենեակ Վահագնի, վասն զի Վահագն՝ որ իւր քաջութեամբ աստուածացած էր, Աստղկան ամուսին էր համարվում։

Նանէ աստուածուհին՝ որ կանանց տնարարութեան և կենաց խնամակալն ու իմաստուն մայրն էր՝ նորան յատկացեալ պաշտամանց տեղը կային Նանէական դիք կոչուած արձանները։

Վահագն քաջութեան աստուած էր համարվում և չար ոգիների պատուհաս։ Վիշապաքաղ Վահագն կոչմամբ պաշտվումէր իւր անուան նուիրուած Վահեվանեան մեհեանում՝ որ Աշտիշատումն էր գտնվում և քրմութեան պաշտօն կատարում էին նորա սերունդը Վահունի կոչմամբ։

Միհր աստուած, էր այն՝ ինչ որ Անահիտն, միայն Միհրը այր, իսկ Անահիտ կին էր։ Սորա մեհեանը գտնվումէր բարձր Հայոց Տերջան գաւառի Բագայարիճ աւանում։

Այս աստուածները մի ընտանիք էին կազմում, եղբայր ու քոյրեր էին, և էին ծնունդ երկնքի — Հայր Արամազդի, և երկրի՝ մայր աստուծոյ։ Աստուածների ծննդեան նկարագիր պէտք է համարել «Երկնէր Երկին և երկիր» երդը։

Ամենաբեղն՝ երկրի արմտեաց բուսոց խնամակալ։ նորա մեհեանը Բագրեւանդի Բագուան կամ Դիցավան աւանումն էր։ Այս աստուածը համարվումէր Ամանոր, որովհետև դորա տօնը կատարվումէր Նաւասարդի մեկից մինչև վեցը, բերոց հասնելու ժամանակ երբ որ Տիգրան Գ. Արշակունին ի պատիւ իւր քրմապետ Մաժան եղբօր մի մեհեան կանգնացրեց նորա գերեզմանի վերայ, որի զոհերից պէտք կերակրուէին հիւր օտարականները, Ամանորի մեհեանը կամ նոյն ինքն Ամանոր կոչուեց Վանատուր։

Տիրն էր աստուածութեան կամակատարը և մարդկութեան միջնորդը աստուածոց առաջ։ նաև աստուածութեան դպիրն էր համարվում։ դո-

րա մեհեանը գտնվումէր Արտաշատի մօտ դէպ հիւսիսային արեւմուտք. մեհեանը կոչվումէր Երազմոյն, իսկ արձանը՝ Տրիդէք.

Այս աստուածութեանց երկրորդական պաշտօնեաներն էին բարի և չար ոգիները.

Արեգակը պաշտվումէր իբրև աստուած, նոյնպէս և Լուսինը՝ որին աւելի ջերմեռանդն էին մանաւանդ կանայք, և ահիւ ու երկիւղածութեամբ երկրպագումէին նորան. Այդ աւելորդապաշտութիւնը մինչև ցայժմ էլ կայ. և լուսինը նորելիս թող որ գանազան գուշակութիւններ են անում այլ և աղօթումեն այսպէս. «Նոր նոր՝ շնորհաւոր. էթաս՝ հալիւոր. գաս՝ թագաւոր. մահին՝ թանգութիւն, հացին՝ էժնութիւն. իմ հօրն ու մօրն՝ արքայութիւն»։ Եթէ նորածնի լուսինը առաջին անգամ տեսնելիս մարդ ձեռքին բան չունենայ՝ վատ նշան է համարվում.

Կրակը իւր արժանաւոր տեղն ունեցել է մեր նախնի կրօնական պաշտամանց մէջ. և մինչև ցայժմ էլ Տեառն ընդառաջի տօնին հանդիսաւոր կրակ են վառում եկեղեցու գաւթում, որի խանձողները հոգեզմայլ ուրախութեամբ խլխլտումեն և իւրաքանչիւրը իւր կտրանը փոքրիկ կրակ վառելով այդ խանձողներից շուրջը պտտումեն քաղանցքի ծայրը մի փոքր պրելով և վերայից ոստոստելով՝ որ հիւանդութիւնը թափուի կրակի վերայ և այրուի. Այդ կրակից վառվումէ երեկոյեան ճրագը. ամիւնը երթկից տան զանազան մասունքների մէջ են լցնում՝ ամեցման համար. այլև մեծ նշանակութիւն են տալիս Տեառն ընդառաջի կրակի ծուխի բարձրանալուն և թեքուելուն, այնպէս որ, ո՛ր կողմն և թեքուի, այն կողմի արտերը արդիւնաւոր կըլինին. Այդ տօնը նաւասարդին էր կատարվում և շատ հանդիսաւոր. Գրիգոր Մագիստրոսը հնոց երգը կրկնելով՝ ասումէ. «Ո տայր. ինձ զծուխ ծխանի և զառաւօտն նաւասարդի»։

Մեր նախնիք ունեցել են հանդիսաւոր տօներ աստուածոց մեհեանների, և այդ տեղ հանդէսներ են կատարուել, որոնք ժողովրդի վերայ մեծ ազդեցութիւն ունէին. իսկ կրօնի պաշտօնեայք շահվումէին ժողովրդեան տուրքերից՝ յանուն աստուածոց.

Երբ որ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով քրիստոնէութիւնը Հայաստան մտաւ, Ս. Գրիգոր կամենալով կռապաշտութեան հետքը բոլորովին անհետացնել մեհեանների տեղ քրիստոնէական եկեղեցի կանգնացրեց որպէս զի պաշտամանց սովոր Հայերը քրիստոնէական հաւատոյ նահատակների յիշատակին նոցա տօնի օրերը, ճշմարտին Աստուծոյ երկրպագէին և ներողամիտ աչքով էր նայում ժողովրդի մէջ արմատացած ցոյցերին՝ որ աշխարհախումբ տօներին կատարուել էին, մինչև որ ժողովուրդը կնդելանար քրիստոնէական կրօնին. Համբարձմանը Քրիստոսի Համբարձումն է տօնում եկեղեցին. բայց ժողովուրդը դրսեւ մի աղգային տօն էլ ունի, — հանդիսաւոր վիճակ ձգել և ծաղկաւիճները կապել, ևն. և ով գիտէ թէ այդ ի հնումն կռապաշտ Հայերը չէին կատարում

ի պատիւ Անահտի և Աստղկան։ Վարդավառին՝ եկեղեցին Ցիսուսի այլակերպութիւնն է տօնում, իսկ ժողովուրդը դրսեւ մի մեծանց վերայ ջուր է շաղ տալիս և աղաւնի է թռցնում. և ով գիտէ թէ այդ ի հնումն կռապաշտ Հայերը չէին կատարում ի պատիւ Ամանորաբեր աստուծոյ ևլն։

Հնումն դարբինները սալը ծեծում էին, որ Արտաւազդի շղթաները ամրանան՝ որ նա չազատուի ու աշխարհը աւերի. իսկ այժմ՝ կանանց համար աւադ ուրբաթ օրը պողպատէ մանեակներ են շինում, որ կոչվում է ուրբաթարուր։ Կանայք գործ են ածում այդ մանեակը, որ դևերը նոցա չըվնասեն։ Այսքանս բաւական համարելով հեթանոս Հայերի կրօնական պաշտամանց մասին՝ դառնանք այժմ դէպի մեր քրիստոնէական եկեղեցին,

Ե. Վ.

ԱՍՏՈՒԱԾ ԽԵՂՃԵՐԻՆ ԱՆԽՆԱՄ ՉԷ ԹՈՂՆՈՒՄ.

Մարիամ անունով մի այրի կին, մի անգամ ամարային մի շոգ երեկոյ նստած էր պատուհանի առաջ և նայում էր խրճիթը շրջապատող այգուն։ Ընդայելով սաստիկ շոգին, նա ամբողջ օրը հաւաքել էր հնձած խոտը, և դարսել ինչպէս հարկն էր։ Թեթև քամին բերում էր խոտից նորա փոքրիկ խրճիթը թարմ, ախորժելի հոտ։ Երեկոյեան վերջալոյսը տեղի տուեց, երկնքի վերայ սահող եղջերաձև լուսինն ևս իւր աղօտ լուսով երևում էր բաց պատուհանից, իսկ պատուհանի ապակիները և շրջանակները իրանց ստուերով նկարուած էին մաքուր յատակի վերայ։ Փոքրիկ վեց տարեկան Փէրդինանդը կանգնած էր պատուհանի առաջ. նորա ծաղկի նման երեսը, շէկ մազերը, սպիտակ պարանոցը և գեղեցիկ շապիկը նշմարվում էին լուսնեակի լուսով։ Աղքատ կինը նստեց հանգստանալու, նա մոռացել էր իւր աշխատութեան և նեղութեան հոգսը և ընկել էր մտածողութեան մէջ։ Ընթրիքի համար պատրաստել էր մի մեծ ման կաթ ու հաց, և դեռ ձեռը չէր տուել։ Փոքրիկ Փէրդինանդը, տեսնելով մօր տրտմութիւնը, մնաց անշարժ կանգնած. նկատելով որ մայրը փոխանակ ընթրիք անելու դառը արտասւում էր։ Նա վայր դրեց իւր գդալը և դադարեց ուտելուց, Մարիամը նոր գարնանն էր այրիացել։ Նորա հանգուցեալ մարդը երիտասարդ և համարեա գիւղի բոլոր մարդկանցից պատուաւորն էր. խնայողութեամբ նա չէր կարող հաւաքել այնքան դրամ, որով կարողանար մի խրճիթ շինել իւր բանջարանոցով. որովհետև փողի պակասութիւն էր զգում, մնում էր նորան ուրիշից պարտամուրհակով դրամ վեր ուներ,—այդպէս էլ արեց և խրճթի առաջը պողպատու ծառեր տնկեց, որոնք գեղեցիկ պտուղներ էին տալիս։ Նորա լաւ ապրուստ ունէին. այր և կին հիւանդացան վարակիչ

տենդով, այրը վախճանուեց, իսկ կինը մեծ դժուարութեամբ առողջացաւ։ Մարդու մահից յետոյ նա ընկաւ վերջին աղքատութեան մէջ, և զգուէլը որ պէտք է զրկուի իւր խրճիթից։ Նորա հանգուցեալ մարդը երկար ժամանակ ծառայել էր Հարուստ գիւղացու հողի վերայ, և իւր հաւատարմութեան համար ստացել էր նորանից փոխ երեք հարիւր րուբլի. խրճիթը իւր բանջարանացովը գնելու համար, այն պայմանով՝ որ նա իւրաքանչիւր տարի վճարէ նորան քսան հինգ րուբլի զուտ դրամ, և քսան հինգ րուբլին դուրս գայ իւր աշխատանաց փոխարէն։ Բլուէմը Մարիամի մարդն էր, մուրհակագրի համեմատ վճարել էր բոլոր վճարը մահից առաջ և մնացել էր պարտ միայն յիսուն րուբ. Մարիամն էլ իմանում էր այդ բանը։ Այդ ժամանակում Հարուստ գիւղացին էլ վարակիչ հիւանդութիւնից վախճանուեց։ Նորա ժառանգներից մնացել էին աղջիկը և փեսան։ Նոքա գտան թղթերի մէջ հանգուցեալ Բլուէմի երեք հարիւր րուբլի պարտքի պարտամուրհակը, բայց չէին իմանում թէ վճարուած է, որովհետև Հարուստ գիւղացին իւր ժառանգներին ոչինչ չէր ասել այդ գործի մասին։ Մարիամը զարհուրեց այդ բանի վերայ, և Աստուծոյ անունով հաւատացնում էր թէ իւր մարդը վճարել է բոլոր գումարը, բացի յիսուն րուբլուց. իսկ նոքա չէին հաւատում։ Երիտասարդ գիւղացին այրի Մարիամին անուանեց անամօթ ու ստախօս, և հրաւիրեց նորան դատաւորի առաջ. բայց որովհետև Մարիամը չունէր ո՛չ մի ապացոյց, թէ պարտք արդէն վճարուած է, հաշտարար դատաւորը վճռեց, թէ լիովին պէտք է հատուցանէ, որքան որ գրուած է պարտամուրհակի մէջ. ծառանգները շուտ պահանջում էին աղքատ Մարիամից իրանց դրամը լիովին. բացի խրճիթից այրին ոչինչ չունենալով՝ ստիպուած պէտք էր ծախեր իւր այդ մի հատիկ գոյքը։ Ընկաւ ծառանգների ոտները, աղաչեց նոցա որ չը զրկեն այն ապաստարանից, Ֆէրդինանդն էլ նմանապէս չոքած էր ծնկան վերայ իւր մօր ետևը,—բայց բոլորը իզուր էր։ Մի՛ւս օրը նշանակուած է ծախել տունը։

Մարիամը տխրած նայում էր երկնքի վերայ ու իւր փոքրիկ Ֆէրդինանդին և արտասուք թափում։ Այսպէս մտածում էր նա և ասում. «Ես այս վերջին անգամը կըլինի, որ հաւաքեցի խոտ իմ փոքրիկ այգուց. Առաջին սպիտակ սալորները՝ որ ես հաւաքեցի ծառերից իմ փոքրիկ Ֆէրդինանդի համար. նա ուտելով քաղցրութիւն էր զգում որ իւր հայրն է տնկել ծառերը։ Այսպէս մենք այստեղ կանցնենք վերջի գիշերը, բայց վաղը այս ժամանակ, իմ փոքրիկ տնակը կըպատկանի ուրիշի, և կարելի է որ նոյն ժամին մեզ աքսորեն այստեղից։ Աստուած է իմանում, որտեղից մենք գիշեր անցնելու ապաստանարան կըգտնենք, գուցե, մենք բացօթեայ անցկացնենք գիշերը»։ Ֆէրդինանդը, որ անշարժ կանգնած էր, մօտեցաւ մօրը և ասաց ողբալով. «Մայրիկ մի՛ լար»։ Յիրաւի ես համարձակվում եմ յիշել քեզ։ Մի՛թէ

դու մոռացել ես, որ Հայրս մեռնելիս մեզ ասաց «լաց չըլինեք։ Աստուած ինքը Հայր է բոլոր այրի կանանց և որբերին. ապաւինեցէք Նորան, և Նա ինքը կօգնէ ձեզ։ Ճշմարիտ, այդպէս է, որդեակ իմ. ես այդ շատ լաւ եմ մտաբերում. պատասխանեց մայրը։ — Բայց ի՞նչու ես դու այդքան երկար լաց լինում։ Բացականչեց Մանկիկը։ Լաւ է աղօթես Աստուածուն, Նա քեզ կօգնէ։ Ո՞Հ, երբ որ ես գնում էի Հօրս հետ անտառը փայտ բերելու, ինձ պատահում էր փորձանք — կամ քաղցածութիւն, կամ մատս կտրում էի — այն ժամանակ ես բոլորովին չէի լաց լինում. ես գնում էի Հայրիկիս մօտ — նա նոյն րոպէին տալիս էր ինձ հաց, կամ ինձ սիրտ էր տալիս համբերելով։ Եւ Աստուած էլ այնպէս օգնում էր իւր որդկներանց։ Նա բարի է, և ամենևին այնպէս չէ, ինչպէս Հարուստ գիւղացին, որի առաջ ծունկ չոդած աղաչում էինք խնայել մեզ, բայց նա՝ ոտով հրելով մեզ՝ արտաքսեց։ Կամ, գուցէ Դու մտածում ես, թէ Աստուած Հարուստ չէ։ Է՞հ նա առաւել Հարուստ է քան թէ մեր անաստուած գիւղացին։ Նայիր պատուհանով, Նորա ստեղծածներին, արեգակը, լուսինը, աստղերը և երկրիս բոլոր արարածները։ Հայրս ասում էր, թէ բոլոր աշխարհը պատկանում է Աստուծուն։ Ի՞նչու պիտի մենք տրտմենք և լաց լինենք։ Մայրիկ, կանգնենք ու աղօթենք. Աստուած մեզ կօգնէ ամէն մի վայրկեանում։ Սկսիր դու, մայրիկ. ես կօգնեմ քեզ աղօթելու։ Նա կընդունէ մեր խնդիրը աւելի շուտ, քան թէ Հարուստ գիւղացուները։ » Դու ճշմարիտ և բարի մանուկ ես, ասաց մայրը, և Նորա արտասուքը արդէն այնքան դադրեց էր վիհիթարութիւնը զարթեց Նորա Հոգու մէջ։ Նա ծալեց ձեռները, բարձրացրեց աչքը երկինք. Նորան հետևեց նմանապէս և մանուկը. մայրը ցած կարդում էր աղօթքը, իսկ որդին կրկնում էր Նորա ետևից իւրաքանչիւր խօսքը։ « Երկնաւոր Հայր, » ասաց նա. « գթած այրիս և անօգնական որբիս, աղօթում ենք Քեզ։ Մենք անյայտութեան մէջ ենք և բացի Քեզանից, չունենք ոչ պաշտպան, ոչ ապաստանարան։ Դու ողորմած ես, ողորմիր մեզ։ Դու ինքդ, Աստուած, ասել ես Որ սուրբ բերանովդ. ով որ յուսով կաղօթէ ինձ, ես կըկատարեմ Նորա սրտի ցանկացած փափագը» ։ Մարիամը իւր որդու Հետ աղօթում էր և ասում։ « Տէր Աստուած, չը թողնես աքսորեն մեզ մեր աղքատ խրճիթից, — չը թողնես առնեն որբ որդուս ձեռքից իւր Հօրից մնացած ժառանգութիւնը։ Բայց եթէ Դու վճռել ես քո անհիմանալի խորհուրդի մէջ, զրկել մեզ մեր աղքատ ապաստանարանից, տուր մեզ Քո լայնատարած երկրի վերայ մի հանգիստ և ուրախ անկիւն, գոնեա մեր սրտերը այնտեղ մխիթարենք։ Մի թողնիլ մեզ յուսահատութեան մէջ՝ երբ կըբարձրանանք բլրակը և հրաժարական Հայեացքը կը ձգենք մեր աղքատ խրճիթին»։ Մարիամի ձայնը լաց լինելուց կտրուել էր, նա չէր կարողանում շարունակել աղօթքը, լուռ նայում էր երկնքին։ Մանուկը ձեռները բարձրացրած դեռ կանգնած էր, յանկարծ բացականչեց, ցոյց

տալով մատով. «Մայրիկ, նայիր, տես, այս ինչ է փայլում. գեպի մեզ թռչում է աստղիկ. ահա նա պատուհանի մօտ է. ահա ներս թռաւ սենեակը։ Ո՞չ նայիր, փայլուն է ինչպէս կանաչ հուր. առաւել գեղեցիկ երեսով քան երեկոյեան աստղը։ Այժմ նա թռչում է առաստաղի վերայ։ Ի՞նչպիսի հրաշք է։» Այդ փայլուն բզեզ է, իմ սիրելի Ֆերդինանդ, պատասխանեց մայրը։ Ցերեկը նա ոչինչ նշանակութիւն չունի, բայց գիշերը գեղեցիկ փայլ է արձակում. կարելի՞ է բռնել նորան։» հարցրեց մանուկը, «չեմ պրուիլ ես այդ հուրից։» Այդ հուրը չի պրում, պատասխանեց մայրը ժպտալով, թէ և թափվում էին կաթիլները նորա երեսի վերայով։ Բռնիր այդ բզեզը և նայիր ուշադրութեամբ։ Բայց այդ փոքրիկ արարածը ևս Ամենաարարչեալի հրաշքներից է։ Մանուկը, մոռացաւ իր տրամութիւնը, վազեց բզեզի ետևից, որը թռչում էր սենեակում և ընկաւ աթոռի տակ, Ֆերդինանդը աշխատում էր բռնել նորան։ «Ա՜խ, նա ոչնչացաւ բացականչեց Մանուկը։ Այն րոպէին, երբ նա կամենում էր բռնել փայլող միջատին, նա թռաւ արկղի ետևից ու կանգնեց պատի մօտ։ Ֆերդինանդը նայեց արկղի ետևից և ասաց. «այժմ ես նորան կրկին տեսնում եմ։ Նա պատի մօտից այնպէս է փայլում, որ նորա չորս կողմի պատերը և յատակը երևում են. բայց ես չեմ կարողանում բռնել նորան։» Սպասիր, պատասխանեց մայրը. նա դուրս կըգայ արկղի ետևից։ Մանուկը սպասեց մի փոքր ժամանակ, յետոյ մօտեցաւ մօրը և ասաց նորան քաղցր ձայնով. «Մայրիկ, գտիր նորան ինձ համար, կամ թէ հեռացրու արկղը պատից մի փոքր, որ բռնեմ։ Մայրը կանգնեց և շարժեց արկղը. մանուկը հանդարտ կերպով բռնեց հանգստացած բզեզին, և նայեց նորան այնպիսի բաւականութեամբ, ինչպէս իշխանները նայում են իրանց թանկագին ակներին։

Մինչ մայրը զբաղուած էր ուրիշ գործով, շարժելով արկղը յատակի վերայ ընկնող մի իրի ձայն լսեց, և վերցնելով այդ իրը, նա բարձր ձայնով գոչեց. «Ամենաշքոր Աստուած, Դու հասցրիր ինձ քո օգնութիւնը։ Այս անցեալ տարուայ ցուցակն է. ես այդ ցուցակը փնդռում էի երկար ժամանակ, բայց չէի գտնում։ Ես յիշում եմ, որ երբ հիւանդ էի, գալիս էին ինձ մօտ անճանօթ մարդիկ, գուցէ նորա ձգած լինին այստեղ, որպէս մի անհարկաւոր բան։ Այժմ ես կարող եմ ապացուցանել, թէ իմ մարդս վճարել է այն փողի մեծ մասը, որը ինձանից պահանջում են։ Ո՞վ կարող էր գուշակել թէ այդ ցուցակը ընկած կլինի արկղի ետևը, որը մենք գնել էինք մեր տան հետ և որին ոչ ոք չի շարժիլ տեղից։» Նա վառեց մոմը և նայեց ցուցակին ուրախութեան արտասուք թափելով։ Տարուայ սկզբից գրած էր, թէ որքան էր նորա հանգուցեալ մարդը մնացել պարտ երեք հարիւր րուբլուց հարուստ դիւղացուն։ Տարուայ ընթացքում ստացած վարձը վճարել է. և հանգուցեալ հարուստ դիւղացին իւր սեպհական ձեռովը գրել էր հետև-

եալը. «Սուրբ Մարտինի օրում ես հաշիւ տեսայ Բլումի հետ, և նա պարտ մնաց յիսուն րուբլի»։ Մարիամը ուրախութիւնից չէր իմանում թէ ինչ անի։ Նա բռնեց իւր որդուն, և զմայլուած ձայնով բացականչեց. «Հ՞ա, Ֆերդինանդ. շնորհակալ եղիր Աստուծուց. մենք էլ նեղութիւն չենք քաշիլ բնակարանի համար։ Այժմ մեզ այստեղից չեն աքսորիլ։ «Ճշմարի՞տ է,» ասաց մանուկը, բայց բոլորը լինձանից էր. եթէ ես խնդրած չըլինէի քեզ արկղը շարժել տեղից, դու երբէք չէիր գտնելու այդ գիրքը»։ Մայրը ընկաւ մտածողութեան մէջ մի քանի ժամանակ, յետոյ ասաց. «Իմ որդի, բոլոր այդ կարգադրութիւնը Աստուածանից էր. — Ես զգում եմ, սարսափում եմ մտածելով դորա վերայ։ Այն ժամանակ, երբ որ մենք արտասուք թափելով աղօթում էինք, թռաւ այդ փայլուն բզեզը, և փայլեց ամենայն տեղ, որտեղ հարկաւոր էր փնդռելու գիրքը։ Ի հարկէ նախախնամութիւնը առաջնորդեց մեզ դէպի բարին։ Առանց Աստուծոյ հրամանի մեր գլխից մի մազը չի պակսիլ։ Մի մոռանար երբէք այդ պատահմունքը, և յոյսդ դիր միշտ Աստուծոյ վերայ, մանաւանդ Թշուառ ժամանակդ։ Նա միշտ չի առաքիլ փայլուն հրեշտակներ. բայց փոքրիկ միջատը ուղղակի կը-յայտնի մեզ Նորա կամքը»։ Մարիամը չէկարողացաւ քնել ուրախութիւնից։ Լոյսը բացուելուն պէս այրի Մարիամը գնաց հաշտարար դատաւորի մօտ, իսկ դատաւորը ուղարկեց գիւղացու ժառանգների ետևից։ Ժառանգները ճանաչեցին իրանց հանգուցեալ հօր ստորագրութիւնը, և ամաչեցին որ գրկել են աղքատ կնոջը և մեղադրել են նորան դատարանում ինչպէս անպատիւ կնոջ։ Հաշտարար դատաւորը ասաց, թէ դուք պատճառ էք եղել նոցա գրկելու, պէտք է վարձատրէք այդ աղքատ այրի կնոջ։

Մարիամը պատմեց, ինչպէս նա իւր որդու հետ աղօթելիս անցեալ գիշերը թռել է նոցա վերայ փայլուն բզեզ։ Եւ դատաւորը ասաց. «Այստեղ տեսնվում է Աստուծոյ մատը. Աստուած ինքը ուղարկել է ձեզ օգնութիւն»։ Երիտասարդ գիւղացին ի գուր շարժուեց Նորա պատմութիւնից և արտասուք թափելով ասաց. Աստուած ոչ միայն օգնում է որբերին, այրի կանանց, բայց և վրէժխնդիր է լինում նորանց փոխարէն։ Ներեցէք ինձ, որ ես վարուեցի ձեզ հետ խստասրտութեամբ. այդ բոլորը իմ չիմանալուցն է։ Ես, որ ձեր տրտմութեանը պատճառ եմ եղել, ընծայում եմ ձեզ այն յիսուն րուբլին, որը դուք չէք վճարել, և եթէ դուք կարիք ունենաք, դիմեցէք ինձ, ես միշտ պատրաստ եմ օգնելու ձեզ, Նորա համար որ տեսնում եմ այժմ, թէ Աստուած օգնում է նոցա, որոնք յոյսը Նորա վերայ են դնում։ Ցուսալ յԱստուած մի լաւ հարստութիւն է։ Երբ որ ես կըլինիմ նեղութեան մէջ, կամ թէ իմ կինը կըմնայ այրի, և երեխայքս որբ, — կօգնէ մեզ ողորմած Աստուածը, ինչպէս Նա օգնեց ձեզ»։

(Թարգմ.) Միքայէլ Կեանջեցեանց.

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Հանգուցեալ երջանկայիշատակ Տ. Գէորգ Դ. Հայրապետի մահուամբ Հայրապետական Գահը թափուր մնալուց յետոյ, այն առատ դատողութիւնները և լրագրական գրուածքները, որ շարունակվումեն ցայսօր նոր Հայրապետի ընտրութեան համար՝ ապացոյց են, որ ազգը ըմբռնել է այն մեծ նշանակութիւնը, որ կայ Հայրապետի և իւր միջև. ապացոյց է որ, այդ ըմբռնումը ամրապնդել է բարոյական կապը ազգի և Մայր Աթոռի հետ: Այդ դատողութիւններն ու գրուածքները ցոյց են տալիս՝ որ ազգը մի որոշ աստիճանի գիտակցութեան է հասել. և տեղի են տուել անտարբերութիւնն ու անհոգութիւնը, որ նկատելի եղել են երբեմն ազգային և եկեղեցական գործերում:

Մենք անցեալ տարի Արարատի մէջ «Սուրբ Էջմիածնի ապեր» վերնագրով մի շարք յօդուածների մէջ, Սինօդի գործերից քաղուածք անելով՝ հրատարակեցինք Պօլօժենեայից յետոյ եղած Հայրապետների ընտրութեան մանրամասնութիւնը. այդ քաղուածքների մէջ յիշուած են Պօլօժենեայի յօդուածները և այլ վարչական հրահանգները ընտրութեանց ժամանակ:

Այժմ թեթևակի յիշենք թէ նախնումն ինչպէս է կատարուել Հայրապետի ընտրութիւնը և Հայրապետի վերաբերմամբ ընդհանուր սկզբունքը երբ է մնել մեր ազգի մէջ: Առաջին ընտրեալ Հայրապետն է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, որի ընտրութիւնը Ագաթանգեղոսը այսպէս է համառօտում: «Իսկ Թագաւորն Տրդատիոս հանդերձ միաբանութեամբն, կնաւ իւրով Աշխէն տիկնաւ, և իւրով քրէերքն Խոսրովիդխտով հրամանեաւ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն ղօրացն իւրոց. և վաղվաղակի հասանէին ի ժամադիրն ըստ հրամանին՝ ի կողմանս Արարատեան գաւառին ի Վաղարշապատ քաղաք: Քանզի Թագաւորն չու արարեալ անդր հասանէր. և կուտեցան ղօրք ամենայն, մեծամեծք, կուսակալք, գաւառակալք և սպասուորք, ղօրագլուխք զօրօք, պետք, և իշխանք, նախարարք, և աղատք, դատաւորք և պատուականք հասեալ կային առաջին Թագաւորին: Խորհուրդ ի մէջ առեալ Թագաւորին ընդ ամենեսին փութալ հասանել բարեաց գործոցն լինել ժառանգաւոր: Եկայք ասէ, ճեպեսցուք, զայս առաջնորդ կենայ մերոց, տուեալ մեզ Աստուծոյ, զԳրիգոր Հովիւ կացուցա-

նել մեզ զի լուսաւորեսցէ զմեզ մկրտութեամբ և նորոգեսցէ զմեզ օրէնսուսոյց խորհրդով արարչին մերոյ Աստուծոյ։» (Ագաթ. երես 295· տպեալ յՕրիագիւղ ի 1822 թուին։)

Հիմք ունենալով այս, կաթուղիկոսի օծման մաշտոցը իբրև ազգային եկեղեցական օրէնք աւանդուէ. «Ցորժամ հանդերձեալ լինին ի բարձրացուցանել զոք ի պատիւ կաթուղիկոսութեան տանս Հայոց նախ քննել պարտ է· ըստ կաթուղիկէ եկեղեցեացն սահմանի բոլոր ժողովուրդք Հայաստեա աղգիս հանդերձ ժառանգաւորօք եկեղեցւոյն և երկոտասան եպիսկոպոսօք ընտրեն ի նոցանէ զերիս արս՝ և քննութեամբ ամենայն ժողովոյն ընտրեն զմի ի նոցանէ վկայեալ յամենայնի ի գործս բարիս և ի վարս առաքինիս սուրբ և անարատ գիտութեամբ և իմաստութեամբ լի, որ կարող իցէ հովուել զժողովուրդն, որ յԱստուծոյ հաւատացի նմա»։

Վերջին դարերուն երբոր Հայաստան երկիրը բռնակալներն և բարբարոսները երեսից սկսեց աւերանալ, ամենայն տեղ սկսեց տիրել ահ ու սարսափը աւազակութեանց և սպատակութեանց պատճառով՝ որով անհնար էր անվտանգ երթևեկութիւնը, կաթուղիկոսի ընտրութիւնը կատարուէին միայն Սուրբ Էջմիածնի վանականքը և Արարատեան նահանգի՝ Կաթուղիկոսի թեմականքը· բայց ընտրեալը կոչումն և Սուրբ օծումն ընդունուէր Տաճկահայոց հաճութիւնն ու Օսմանեան պետութեան սուլթանի հրովարտակն և Պարսից շահի բազամը ստանալուց յետոյ։ Երբոր Հայերը Ռուսաստանում բազմացան՝ հայրապետները թէև Պարսից իշխանութեան երկրում, սակայն անհրաժեշտ համարեցին ստանալ Ռուսաց կայսրների հրովարտակը սկսեալ Սիմէօն Կաթուղիկոսից։

Այն ազգնապալից ժամանակները, երբ ոչինչ ապահովութիւն չկար, պէտք չէ զարմանալ որ ազգը Կաթուղիկոսի ընտրութեան մասնակցումէր միայն թղթով. այժմ ժամանակները փոխուած են· ամենայն դիւրութիւն ընձեռուած է թէ երթևեկութեան ճանապարհների կանոնաւորութեամբ և թէ ապահովութեամբ։ Ազգի պատիւը, եկեղեցու վիճակը և Կաթուղիկոսական կոչման վսեմութիւնը պահանջումէ որ Կաթուղիկոսի ընտրութիւնը կատարուի ազգի հոգևորական և աշխարհական պատգամաւորների ներկայութեամբ, և այդ ներկայութիւնը պէտք է լինի ոչ—եթէ ոչ այն-

տեղ՝ ուր ցարդ եղել է, այսինքն Վաղարշապատի Կաթուղիկէ Մայր եկեղեցում։ Այդպէս սկսուել է Սուրբ Գրիգոր Լուսաւորչից, այդպէս և պէտք է յարունակուի։

ՀԱՇԻՒ ԲՈՆԱԿՈՒԹ ԳԻՒՂԻ ԴՊՐՈՑԻ.

Սիւնեաց վիճակի Բռնակոթ գիւղի հոգևոր ծխական դպրոցի հոգաբարձութիւնը ուղարկելով Դպրոցի տնտեսական հաշիւը՝ յայտնում է որ Հոգաբարձութիւնը բաղկացած է տասն և չորս անձինքներից, որ 1878 թուից ցայսօր ստանձնելով Դպրոցի Հոգաբարձութեան պաշտօնը՝ իւր կարողութեան չափ աշխատել է արդիւնաւոր անել։ Սկզբում օգնող չէ ունեցել, բայց անցեալ տարի օգնել են մի քանի գիւղերի Հայ հասարակութիւնք նուիրաբերելով իրանց երկրի ընդհանուրից։ Նուիրատուաց անունները թէև ուղարկուած է ի հրատարակութիւն՝ բայց թերթի անձկութեան պատճառով չենք կարող կատարել Հոգաբարձութեան ցանկութիւնը։

1883 թուին դրամական օժանդակութիւն եղել է. Քարահունչից՝ 1 րուբլի. Տոլորսից 2 րուբ. Գեօրիսից՝ 12 րուբ. 40 կոպ., Շաղաթից 16 րուբ. 80 կոպ., Շնաթաղից՝ 2 րուբ., Բալակից 2 րուբ. 25 կոպ., Շուշիից՝ 2 րուբ 10 կոպ., Բռնակոթից 9 րուբ. 40 կոպ., Ալխաթիանից 2 ր. 75 կոպ., Ուզ գիւղից՝ 2 րուբ., Զէյվայից՝ 2 րուբ., Լորից 1 րուբ. 50 կոպ., Աղքեանդից՝ 1 րուբ., Վարաքիլիսայից՝ 1 րուբ., Անգեղակոթից՝ 1 րուբ., Խընձորեսկից՝ 3 րուբ., չորս պարոնայք և դպրոցի ուսուցիչ 8 րուբլի։ Գումարն է 70 ր. 20 կ.

1883 թուին ցորենով օժանդակութիւն է եղել,	Սմ.	Ձան.
Բռնակոթից	175	3
Աղքեանդից	8	3
Ուզից	15	
Գումարն է	199	

ՄՈՒՏՔ.	Ր.	Կ.	Սմար	Ձանաղ
Հոգաբարձութեան շահեցրած ընդհանուր դրամից և ցորենով գումարը 1878 ամի Յունվարի 1 ից 31ն Սեպտեմ. 1883 ամի.				
Ի 1ն Օգոստ. 1882 ամի 31ն Յունվարի 1883 ամի. ի նուիրատու անձանց.	845	75	492	4
Ցորենի և դրամի գումարը նուիրած զանազան մարդկանցից որք տպուած են Արարատի անցեալ համարի մէջ.	26	85	38	3
Ի 10ն Մարտի 1883 ամի 31ն Դեկտեմ. նուիրատուների ցուցակով.	67	20	198	4

Աշակերտաց թոշակադրամ ի 1ն Սեպտ. 1882 ամի ց1ն Ցուլիսի 1883 ամի.	76	65	729	5
Գումար.	1016	35		
729 5/6 սոմարից 522 սոմար 5 չանաղ վաճառուած.	520	71		
Ընդհանուր գումարն է.	1537	16	207	
Ծ Ա Խ Ք.				
Ջանադան ծախք ի պէտս դպրոցի ի 1էն Սեպտ. 1878 ամի ց1ն Ցունվարի 1883 ամի.	30	15		
Ծախք ծխական հոգևոր դպրոցի շինուելեան (որ բաղկացած է մի դահլիճից, մի առանձնասենեակից և մի սենեակից քար և կրով) ի 1էն Մարտի ց1ն Դեկտ 1883 ամի.	1091	76		
Ի 1-ն Սեպ. 1882 ամի ց 1-ն Ցուլիսի 1883 ամի Ուսուցչի ռոճիկ.	200			
Ծախքի գումարն է.	1321	91		
Ծախքը մուտքից հանելով մնում է մայր գումար առ 1-ն Դեկ. 1883 ամի.	215	25	207	
Ապառիկ ճաշակ.				
Ցովհաննէս վարդապետ Ղալամեանցի վերայ, որ ստորագրած է ժապաւինեալ տօմարում անցեալ տարի.	50			
Ջանադան անձանց վերայ ըստ հաշուոյ ժապաւինեալ տօմարի մնում է դրամ և ցորեան. . .	5	10	66	4
Պատրաստի և ապառ. արդեանց ընդհանուր գումարն է.	270	35	273	4

Աբգամէք Հոփոփեան — թարժուրեան
Մխրտչեան Տէր Գէորգեան
Եսայեան Ցովհաննէսեանց
Կեանչիմ Ա.միրխանեանց
Եսայեան Մահտես Աղայեանց

Զ Կ Ն Ո Ր Ս.

(Գէօթէէից)

Ձուրը կարկաչէում, ջուրը ուռչում էր.
Ձկնորսը նորա ափին լուռ նստած
Կարթին անխռով հանդարտ նայում էր
Ճաղըր ջրնի մէջ հոգւով ընկղմած։
Եւ մինչ նստած էր և կարթին նայում —
Ահա փոթորկում բաղխում են ալիք.
Ցուզուած ջրիցը դուրս է սլանում
Նորա առաջև մի կոյս գեղեցիկ։

Անուշ երգեց կոյսն, և նորան ասաց.
Հպատակներիս «ինչո՞ւ» ես որսում.
Մարդկային մտքով որոգայթ լարած
Մահաբեր ոօթին էր ես զոհ մատնում։
Թէ գիտնայիր, ինչպէս երջանիկ
Ձրի խորքումը ապրում են ձկներն,
Ցած կիջնէիր դու. կըսիրէիր ալիք —
Կեանքդ այն ժամանակ քաղցը կըլինէր

Ոսկեփայլ արփին, արծաթեայ լուսին
Մինէ ծովի մէջ չէ՞ն միշտ զովանում.
Նոցա պատկերը այնտեղ խնդագին
Մինէթ առաւել չէ արտափայլում։
Եւ ջինջ երկինքը գրաւում չէ՞ քեզ,
Երբ վըշխիտ ջըրումն է նա նկարուած.
Եւ քո պատկերը — երբ անդ կընայես,
Ձէ՞ հրապուրում գէպ ջուրն յուզուած»։

Ձուրը կարկաչէում, ջուրը ուռչում էր,
Եւ մերկ ոտները ձկնորսի թրջում.
Ցանկութեամբ նորա սիրտը լցվումէր,
Աչես թէ սիրոյ առած էր ողջոյն։
Կոյսը երգում է և նորան գիւթում,
Ահա ձկնորսը ջրասոյզ եղաւ.
Ձուրը քարշում էր ձկնորսը գնում —
Ահա և անհետ նա ընդ միշտ կորաւ։

Ց. Ցովհաննիսեան.

Մայր Աթոռոյս վիճաբան ԵՂԻԱԶԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Տէր Կարապետեան ադինջեցի՝ ի հասակի 71 ամաց երկարատև անբուժելի հիւանդութենէ յետոյ կնքեց իւր մահկանացու երկրաւոր կեանքը Մարտ ամսոյս 14-ին չորեքշաբթի օրը կէս օրից յետոյ 3-րդ ժամին և հետևեալ օրը ճաշու ժամից յետոյ, պատշաճաւոր յուղարկաւորութեամբ թաղուեց Մայր Աթոռոյս Միաբանութեան Հանգստարանում։

Հանգուցեալը 1829-ին մտել է Մայր Աթոռոյս Ժառանգ. Հոգ. Դպրանոցը, ուր շարունակելով իւր ուսման ընթացքը՝ 1835 թուին ստացաւ կիսասարկաւագութիւն. 1839 թուին ձեռնադրուեց սարկաւագ, իսկ 1842 թուին՝ արեղայ ի Ս. Էջմիածնի Հոգ. դպրանոցում 1841 թուից մինչև 1848 թուի Յուլիսի 30-ը կատարեց ուսուցչութեան պաշտօն։ Ջերմեռանդն ծառայութեան համար 1850 թուին Նոյեմ. 16-ին վարձատրուեց վարդապետական լանջական ականակուռ խաչով. 1852 թուին Հանգ. Ներսէս Ե. Կաթուղիկոսի ձեռնադ. ծայր. վարդապետ. կոչումն ստացաւ 1857 թուին Յունվ. 12-ին առաջարկութեամբ նոյն Հանգ. Ներսէս Կաթուղիկոսի բարձրագոյն հաստատութեամբ նշանակուեց Սինօդի անդամ. 1857 թուի Մարտի 29-ից մինչև 1859 թիւը վարեց Մ. Աթոռոյս ծախսարարութեան պաշտօնը. 1859 թ. Դեկ. 6-ին ձեռնադրութեամբ Հանգ. Մատթէոս Կաթուղիկոսի բարձրացաւ եպիսկոպոսութեան և 1861 թուին Նորին Վեհափառութենից ստացաւ Արքեպիսկոպոսութեան կոչումն. 1860 թուից մինչև 1861

թիւը վարեց վերատեսչի պաշտօն՝ ժառանգաւորաց դպրոցում։ 1863 Յունի 3ուլիսի 17 ից մինչև 1865 ը վարեց Մայր Աթոռոյս Աւագ լուսարարութեան պաշտօնը։ 1864 Յունի Մայիսի 25 ին առաջարկութեամբ Հանգուցեալ Մատթէոս Կաթուղիկոսի արձակուեց Սինոդի անդամութիւնից և 1865 Յունի Նոյեմբ։ 22 ին միջնորդութեամբ Տեղակալի Ատենապետի Սինոդի, բարձրագոյն հաճութեամբ՝ նշանակուեց ժամանակաւոր Կառավարիչ Բեսարաբիոյ և Նոր Նախիջևանայ Թեմի։ 1868 Յունին արձակուելով յիշեալ պաշտօնից վերադարձաւ Ս։ Էջմիածին և տնօրէնութեամբ Հանգ։ Գէորգ Կաթուղիկոսի 1873 Յունից մինչև 1881 թիւը վարեց Երևանայ Թեմի Փոխանորդութեան պաշտօնը։

Միաբանութիւնս խորին տխրութեամբ յանձնելով հողին իւր բազմամեայ միաբանակցի և արդիւնաւոր պաշտօնէի երկրաւոր նշխարը՝ աղօթումէ առ Աստուած լուսաւորել Հանգուցելոյ հոգին իւր սրբերի և արդարների հետ գտնուելով։

Նախկին Սօլիտնիկ ՍՈՒՔԻԱՍ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ ԹԱՊԻՆՈՍԵԱՆՑ Ատենադպիր Սինոդի Մայր Աթոռոյս 58 տարեկան հասակում կնքեց իւր մահկանացու կեանքը Երևանում Մարտ ամսոյս 9 ին երեկոյեան 11 ժամին՝ կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Եւ ամսոյս 11 ին, կիւրակէ օրը, տեղւոյն հասարակաց Հանգըստարանում թաղուեց։ Թաղման հանդիսին ներկայ էին ըստ կարգադրութեան Հոգևոր Իշխանութեան՝ երկու Եպիսկոպոս և երկու Վարդապետ։

Հանգուցեալը 1842 թուին աւարտելով ուսման ընթացքը Երևանու Հոգևոր դպրոցում՝ 1845 թուին Փետր։ 5 ին մտաւ ծառայութիւն Ս։ Էջմիածնայ Սինոդը։ 1846 Յունի Սեպտ։ 19 նշանակուեց կարգապահ մատենավար և նոյն Յունի Հոկտ։ 16 ին օգնական ատենադպրի։ 1856 Թ։ Նոյեմբ։ 15 ին մասնակցեց քննութեանը Ալէքսանդրապոլի վիճակի Եկեղեց։ գործերի և Հոգ։ Կառավարութեան վերայ, օրինակելի ջերմեռանդութեամբ։ 1857 Յունին ըստ հաճութեան բարեյիշատակ Ներսէս Ե։ Կաթուղիկոսի՝ նշանակուեց Ատենադպիր Սինոդի։ 1859 Յունին Հոկտ։ 5 ին և 1861 Թ։ Ապրիլի 19 ըստ տնօրէնութեան Հանգ։ Մատթէոս կաթուղիկոսի՝ մասնակցեց Թիֆլիզու Ներսիսեան Հոգ։ դպրանոցի գործերը կարգի դնելուն։ 1870 Յունին Նոյեմբ։ 20 ին ըստ իւր Հրաժարականի արձակուելով Սինոդի Ատենադպրութեան պաշ-

տօնից ստանձնեց Վաղարշապատում, Գաւառապետի մօտ, ամբանոց գնացող թափառական քուրդերի վերահսկողի պաշտօնը, 1871 Մուին Ապրիլի 4ին ըստ ցանկութեան Հանգ. Գէորգ Կաթողիկոսի առ Երևանու Նահանգապետը, նորից ստանձնեց Սինօդի Ատենադպրութեան պաշտօնը, 1876 Թ. մնանակեցեց քննութեանը Ղուշիի թեմ. և դպրոցական գործերի, Սինօդի Պրօկուրօրի բացակայութեան ժամանակ քանիցս վարել է նոյն պաշտօնը, Եւ յընթացս իւր ջերմեռանդն պաշտօնավարութեան ստացել է հետևեալ շքանշանները. Ս. Աննայի՝ 2 և 3 աստիճանի, Ս. Ստանիսլաւի՝ 2 աստիճանի արքունական թագով. և Պարսից Թագաւորութեան՝ Առիւծի և Արեգական շքանշանը 2 կարգի՝ աստղով և 3 կարգի,

Իւր քաղցր բնաւորութեամբ սիրելի էր իւր ծանօթներին և ջերմեռանդն պաշտօնավարութեամբ՝ իւր իշխանաւորներին, որոնք երկար ժամանակ անմոռաց կըպահեն Սուքիաս Թաղիանոսեանի յիշատակը,

Լուսաւորեսցէ Տէր Հանգուցելոյ հոգին և իւր սուրբ տեսութեան արժանացուսցէ, մխիթարելով Հանգուցելոյ սգալից ընտանիքը և վշտացնեալ բարեկամներն ու ծանօթներ

«ՎԱՐԴԱՐԱՆԻ» *Խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել Հայ հասարակութեանը, որ ներկայ Փետրուար ամսից կը շարունակուի «Վաչքաչան» ամսագրի հրատարակութիւնը և լոյս կը տեսնի նորա* № 3, *նոյն ուղղութեամբ և դիրքով և նոյն աշխատակիցների օգնութեամբ. ուստի հրաւիրում է ցանկացողներին բաժանորդ գրուելու դիմել Թիֆլիս Խմբագրութեան Քարտուղար Պ. Գ. Շահբուդաղեանցին հետևեալ հասցէով* Въ Тифлисъ, въ Редакцію журнала «Варжаранъ», Абасъ-Абатская площадь, домъ № 8, Секретарю Редакціи Грыгорію Шахбудагянцу, *կամ*—Въ Тифлисъ. депо лампъ Цатурова. *Տարկաստանումը բաժանորդագրութիւնը ընդունուում է «Բուրաստան Մանկանց» Թերթի խմբագրատանը, Կ. Պօլիս:*

Տարեկան բաժանորդագինն է հինգ ռուբլի կանխիկ:

Ծանօթութիւն. «Վաչքաչանի» Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր և Յունվար ամիսների լոյս չը տեսած համարների փոխարէն խմբագրութիւնը խոստանում է տալ իւր բաժանորդներին կամ մի ընթերցանութեան նոր գիրք. կամ նոյն ամիսների չափին համապատասխան մի համար Յունիս ամսին:

Խմբագիր—Հրատարակող՝ Ն. Խոսրովեանց.

Ամուլի տակից դուրս եկաւ

ՄԽԻԹԱՐԱՅ ԳՕՉԻ

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

ԻՐԱԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ ՀԱՆԴԵՐՁ
ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲՔ

ՎԱՀԱՆ Ա. ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ

ՄԻԱԲԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՎԱՆԱՀՕՐ
Ս. ԳԱՅԻԱՆԵԱՑ ՎԱՆՈՒՑ

Գիրքը բաղկացած է 634 երեսից մեծադիր քառածալ թերթով, որից 180 երեսը միայն հետազօտողի յատաջաբանն է. գինն է 3 րուբլի։

Այս Ըթուռոյս Տպարանի գրատան գրքերը կը վաճառուին գումարով առնողներին 20% զիջումով, գնել ցանկացող գրավաճառներին, դպրոցների հոգաբարձուներին և այլոց կուղարկուի գրքերի ցուցակը՝ երբ նոքա դիմեն Տպարանական Յողովին։